AZG NEW 1.QXD 7/3/2009 11:25 PM Page 1


# Ազգ
Azg

4 ՀՈՒԼԻՍ 2009 ՇԱԲԱԹ 124 (4260)

ISSN: 1829-1651


## Մոսկվայում հայաստանցի է սպանվել

Ըստ Panarmenian.net-ի, Մոսկվայի հյուսիսային մասում՝ «Պոլեժաեւսկայա» մետրոյի կայարանի մոտ սպանվել է Ուֆայում բնակվող 51-ամյա հայաստանցի Միխայիլ Աղաթուրյանը: Վերջինս իր բիզնեսն է ունեցել Մոսկվայում, Զորգեի փողոցում նա բնակարան էր վարձակալում: Ըստ նախնական վարկածի, անհայտ անձը կրակել է գործարարի վրա խլացուցիչով ատրճանակով, «վերստուգիչ» կրակոց անելով գլխին: «Առավոտյան ժամը 10-ին մոտ Զորգեի փողոցի թիվ 4 տան մոտ 40-45 տարեկան անհայտ անձը կրակել է գործարարի ուղղությամբ եւ հեռացել հանցագործության վայրից, որտեղ նրան կարող էին սպասել մեղսակիցները մեքենայով», հաղորդել է ոստիկանական աղբյուրը: Տուժածը մահացել է ստացած վերքերից, հաղորդում է ՌԻԱ «Նովոստի» գործակալությունը:

# Հայաստանի քաղաքական վերնախավը փոփոխելու հրամայականը

**ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**



**Մի հետաքրքրական բան էր կատարվում նախորդ օրը՝ Մատենադարանի մոտ, Տեր-Պետրոսյանի կողմնակիցների տոնական եւ արտահերթ հանրահավաքին: Հանրահավաքայինների մի մասը, ազատ արձակվածների կրակոտ ճառերը լսելուց հետո, չգիտեմ նրանի՞ց, որ անձրեւ էր գալու, թե՞ այն պատճառով, որ առաջնորդն այլեւս նոր բան չի ասում (եւ՝ վաղուց)՝ սկսեց հեռանալ: Սա հասկանալի է. անգամ լավագույն միզանսցեններով տեսարանը, մի քանի կրկնությունից հետո, հոգնեցնում է հանդիսատեսին: Պարզ էր նաեւ, թե ի՞նչ եւ ինչպիսի տոնայնությամբ պետք է ասեին ազատ արձակվածները՝ տոնական հանրահավաքի «մեղավորները» Մատենադարանի հարթակից: Ասվածն ասելու էին ամեն դեպքում, անկախ նրանից՝ Ջհանգիրյան, Արզումանյան, թե՞ մեկ ուրիշ ազգանունն էին կրում, կարեւորը՝ «նստել» էին ու հերոսի լուսապսակով դուրս եկել, ու այդ դեպքում սովորաբար արտասանում են այդպիսի տեքստեր՝ չկոտրվելու, պայքարի, պայքարով ձեռքբերվածի մասին: Բայց դե ամոթն էլ լավ բան է՝ նախագահը ուզել եւ համաներել է, սրանք անամոթաբար ասում են՝ մեր պայքարի շնորհիվ է: Էդ քիչ է, դեռ իրենց հաղթանակը նշանակում է դիմացինի պարտություն, էն էլ մարտի 1-ից հետո առաջին ներքաղաքական պարտությունը, սա արդեն չափազանց է, դեռ վրան էլ ավելացնում են՝ էնքան գծուծ է համաներման հեղինակը, որ զիջել է այնքան, որքան կբավարարեր ԵԽԽՎ-ի պատժամիջոցներից խուսափելու համար: Սա նման է այն բանին, որ երբ մեկին հյուրասիրում ես, մինչեւ վերջ ուտում-խմում է, հետո էլ ասում, թե հյուրասիրածդ մի բան չէր, չէի՞ր կարող ավելի լավ բան դնել սեղանին, կամ էլ՝ մենք ստիպեցինք, թե չէ դու հյուրասիրողը չէիր:** *Տես էջ 2*

## Սերժ Սարգսյան. «Գոհ չեմ բանակցությունների ընթացքից...»

### *Հայաստանում կբացվի դիվանագիտական ակադեմիա՝ նաեւ ԵԱՀԿ աջակցությամբ*

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գործող նախագահ, Հունաստանի արտաքին գործերի նախարար Դորա Բակոյաննիսին եւ նրան ուղեկցող պատվիրակությանը երեկ ընդունել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահի պաշտոնական կայքէջի տեղեկացմամբ, Սարգսյանն ասել է, որ նրա այցը լավ առիթ է՝ տեղում ծանոթանալու տարածաշրջանային խնդիրներին, քննարկելու Հայաստան-ԵԱՀԿ օրակարգային հարցերը, ինչպես նաեւ կարծիքներ փոխանակելու երկկողմ հետաքրքրություն ներկայացնող թեմաներով:**

**«Մենք մեծապես կարեւորում ենք համագործակցությունը ԵԱՀԿ-ի հետ, որը շարունակում է մեր տարածաշրջանում մնալ որպես կայունության ու խաղաղության ամրապնդող գործոն, ժողովրդավարության, մարդու իրավունքների զարգացման գործընթացի ակտիվ դերակատար», ընդգծել է հանրապետության նախագահը:**

**Նշելով, որ Հայաստանը եւ Հունաստանը երկարատեւ բարեկամություն եւ պատմական ընդհանուր անցյալ ունեն, Հունաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարն ասել է, որ երկու երկրների միջեւ առկա է շատ լավ փոխըմբռնում եւ քաղաքական համագործակցություն: Որպես ԵԱՀԿ նախագահող նա բարձր է գնահատել Հայաստանի կառավարության եւ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի փոխգործակցությունը եւ այն արդյունքները, որոնց հաջողվել է հասնել: Ըստ Դորա Բակոյաննիսի, հայ գործընկերոջ հետ այսօր ստորագրած համաձայնագիրը համագործակցության եւ արդյունավետ աշխատանքի նոր հնարավորություններ է ստեղծում:** *Տես էջ 3*

*ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-ԵՐԵՎԱՆ-ԲԱՔՈՒ*

## Նպատակն է՝ երկու հասարակությունների միջեւ վերացնել անվստահության պատնեշը

Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլ-Բյուլ օղլիի երկրորդ այցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն տեղի ունեցավ ղարաբաղա-ադրբեջանական սահմանի հատումով՝ Մարտակերտի շրջանում: Դեսպանը, սակայն, այս իրողությունը գնահատել է անցում ոչ թե սահմանով, այլ շփման գծով:

Նույն այցի շրջանակներում Արցախ էին ժամանել նաեւ ՌԴ նախագահի միջազգային մշակութային համագործակցության հարցերով հատուկ ներկայացուցիչ, Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի համանախագահ Միխայիլ Շվիդկոյը, Ռուսաստանում ՀՀ դեսպան Արմեն Սմբատյանը, հասարակական ու քաղաքական գործիչներ Հայաստանի Հանրապետությունից: Փոլադ Բյուլ Բյուլ Օղլիին այս անգամ ուղեկցել էին Ադրբեջանի խորհրդարանի անդամներ: Այս վերջին փաստին ադրբեջանցի դիվանագետը քաղաքական աստառ չի տվել: «Դա արդեն, այսպես ասած, քաղաքական երանգ ունի: Ես ասել եմ հանդիպման ժամանակ եւ հիմա էլ լրատվամիջոցների հարգելի ներկայացուցիչներին կուզեի ասել, որ կարգավորման քաղաքական գործընթացին, որ տեղի է ունենում, մենք ոչ մի դեպքում չենք խառնվում: Արտգործնախարարների եւ նախագահների միջեւ բանակցություններին չենք խառնվում: Մենք որպես մշակույթի երեք նախկին նախարարներ այսպիսի նախաձեռնություն ենք հանդես բերել, որ հնարավորություն տանք մարդկանց իրար հետ շփվելու: Այսօր հնչել են մարդասիրական տարբեր ծրագրերի առաջարկներ, որոնք կարող են մերձեցնել մարդկանց եւ դիրքորոշումը», ասել է նա:

Հյուրերին իր նստավայրում ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Երբ լրագրողները Փոլադ Բյուլ-Բյուլ Օղլիին հարցրել են, թե ինչի մասին են խոսել ԼՂՀ նախագահի մոտ, վերջինս «ուղղել է» լրագրողներին, ասելով. «Ես հարցն այդպես չէի առաջադրի՝ ոչ թե նախագահի հետ, այլ տեղի է ունեցել հանդիպում հասարակայնության ու Հայաստանից եկած պատվիրակության եւ այստեղ ապրողների ներկայացուցիչների հետ»: Նրա այս պատասխանը նույնիսկ զարմացրել է Արմեն Սմբատյանին, որն ուղղակի իր տարակուսանքն է հայտնել լրագրողներին:

Ինչպես նշել են այցի նախաձեռնության հեղինակները՝ նպատակը երկու հասարակությունների միջեւ առկա անվստահության պատնեշի վերացումն է: Այս համատեքստով ադրբեջանցի դիվանագետը շեշտել է, որ երկու հարեւան ժողովուրդներին վիճակված է միասին ապրել, ուստի անհրաժեշտ է հաստատել փոխհարաբերություններ եւ հարգանք տածել իրար նկատմամբ: Ընդ որում, Փոլադ Բյուլ-Բյուլ Օղլիի համոզմամբ, թշնամու կերպար ստեղծում են հենց լրագրողները: «Պետք է ապրել բարիդրացիների նման, իրար օգնության ձեռք մեկնել, գտնել ոչ թե բաժանող, այլ միավորող պահեր», խորհուրդ է տվել նա: Ադրբեջանցի դիվանագետը էքսկուրս է կատարել դեպի խորհրդային տարիները, մասնավորապես հիշատակելով Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանը. «Այդ ժամանակ հայերը, ադրբեջանցիները եւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները կռվել են միասին: Եվ այդ պատճառով էլ մարդիկ պետք է հասկանան, որ եթե այն ժամանակ կարողացել են միասին ինչ-որ բան անել, հիմա էլ կարող են», ասել է Բյուլ-Բյուլ Օղլին:

Արդյոք Ադրբեջանի դեսպանի այցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ կարելի՞ է դիտարկել ԼՂՀ-ի ճանաչման համատեքստում: Պատասխանը միանշանակ բացասական էր, քանի որ դեսպանն աներկբա ներկայացնում է իր երկրի պաշտոնական տեսակետը:

Շուշիից պատվիրակությունները մեկնել են Երեւան: Այցի հաջորդ հասցեն կլինի Բաքուն:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

## Մեկ տեղ հայկական համայնքին Քուրդիստանի խորհրդարանում

Քուրդիստանի խորհրդարանը մեկ տեղ է հատկացրել հայկական համայնքին: Գրեթե 200 հայ ընտանիք կա Զախոյում, թուրքական սահմանին մոտ գտնվող Իրաքի Դուհոկ նահանգում: Ինչպես տեղեկացնում է araratnews.eu կայքէջը, երեք անձ է պայքարում այդ տեղի համար՝ Արամ Շահինե Դավուդ Բակոյանը, Իշխան Մալկոն Սարգսյանը եւ Աերտեղ Մովսես Սարգսյանը:

Քուրդիստանի խորհրդարանական ընտրությունները անցկացվելու են հուլիսի 25-ին, մասնակցելու համար գրանցվել են ավելի քան 2,5 մլն ընտրողներ: **Ա.Հ.**

## Սեւանա լճում խեղդվելուց փրկվել է 5 տարեկան երեխա

Սեւանա լճի քաղաքային լողափում հուլիսի 2-ին ռետինե ներքնակով մի երեխա 80-100 մետրով հեռացել է ափից: Ալիքներից ներքնակը շրջվել է, եւ երեխան հայտնվել է ջրում: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից, ժամը 15.30-ին Գեղարքունիքի մարզի Սեւանի ջրափրկարարական ջոկատի կենտրոնակայանում ստացված ահազանգից անմիջապես հետո դեպքի վայր է մեկնել ջրափրկարարական խումբը: Ժամը 15.32-ին ջրից դուրս է բերվել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի բնակիչ, 2004 թ. ծնված Նարեկ Խչոյանը: Երեխային ցուցաբերվել է առաջին բուժօգնություն, եւ հանձնվել ծնողներին: Ն. Խչոյանի առողջական վիճակը բավարար է:

## Եվրոմիության խորհրդատվական խումբը շարունակելու է աջակցել Հայաստանին

Ազգային անվտանգության խորհրդից հաղորդում են, որ երեկ կայացել է Եվրոմիության խորհրդատվական խմբի եւ տնտեսական քաղաքականության ու իրավաբանական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC) հանձնախմբի համատեղ նիստը, որը վարել է ԱԱԽ քարտուղար, եվրոպական կառույցների հետ Հայաստանի համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ **Արթուր Բաղդասարյանը**: Կարեւորելով ԵՄ խորհրդատվական խմբի աշխատանքը Հայաստանում՝ Ա. Բաղդասարյանը նշել է, որ 2009-2011-ի գործողությունների ծրագրով նախատեսված է շուրջ 200 ուղղություններով տարաբնույթ ծրագրերի իրականացում: Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավար **Ռաուլ դե Լուցենբերգերը** նշել է, որ Եվրոմիության պատվիրակությունը լուրջ ջանքեր է գործադրել՝ օգնելու նշված ծրագրի իրականացմանը Հայաստանում: ԵՄ խորհրդատվական խմբի ղեկավար **Ռոլֆ Բոեհնկեն** ներկայացրել է խմբի աշխատանքը: Մասնավորապես՝ առաջին եռամսյակում խումբը ներկայացրել է հակակոռուպցիոն ծրագրի նախագիծը, առաջարկություններ հանրային ծառայությունների ոլորտում, ինչպես նաեւ մարդու իրավունքների ազգային ծրագրի վերաբերյալ: Խորհրդատվական խումբն աշխատում է նաեւ Հայաստանում դիվանագիտական ակադեմիայի ստեղծման ուղղությամբ, աջակցում է էկոնոմիկայի նախարարությանը Հայաստանի՝ ազատ առեւտրի համաձայնագրին միանալու գործում:

Մարդու իրավունքների պաշտպան **Արմեն Հարությունյանը** ողջունել է ծրագիրը եւ նշել, որ համապատասխան գերատեսչությունների ղեկավարները պետք է ամենօրյա համագործակցության մեջ լինեն իրենց հետ աշխատող փորձագետների հետ: Ա. Բաղդասարյանի առաջարկով ԵՄ խորհրդատվական խմբի երեք ամսվա աշխատանքների մասին հաղորդումն ընդունվել է ի գիտություն: Ռ. Բոեհնկեն ներկայացրել է նաեւ ԵՄ խորհրդատվական խմբի՝ հուլիս-դեկտեմբեր ամիսների աշխատանքային ծրագիրը, մասնավորապես՝ նախատեսվում է զբաղվել կառավարման համակարգի եւ կայուն տնտեսական զարգացման հարցերով: Կշարունակվեն աշխատանքները նաեւ պետական պարտքի կառավարման, հարկային եւ մաքսային ոլորտներում: Ծրագիրը հավանության է արժանացել, սակայն Ա. Բաղդասարյանն առաջարկել է շահագրգիռ բոլոր կողմերին՝ աշխատանքային կարգով ներկայացնել իրենց առաջարկությունները եւ լրամշակել փաստաթուղթը:

# Հայաստանին տրամադրված վարկերը դեռ բավականին գրավիչ են

## *Խոսելով ՀՆԱ- արտաքին պարտք հարաբերության մասին՝ ասաց ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարը*

Համաշխարհային բանկից Հայաստանին քառամյա օժանդակության 540 մլն դոլարի վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվեց եւս 60 մլն դոլար վարկ՝ «զարգացման քաղաքականության գործառնություն» անվանմամբ: Այդ կապակցությամբ երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավար **Արիստոմենե Վարուդակիսը** հայտնեց, որ այս վարկը տրամադրվում է երկու ռազմավարական նպատակների համար: Առաջինը՝ օգնել սոցիալապես անապահով խավին մեղմելու ճգնաժամի ազդեցությունը, երկրորդ՝ բարձրացնել երկրի տնտեսության մրցունակությունը: Վարկը տրամադրվել է 20 տարի ժամկետով եւ 0,75 տոկոսով: Առաջին 10 տարին վարկի արտոնյալ ժամկետն է: ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարը տեղեկացրեց, որ այս ծրագիրը բաղկացած է երեք փուլից եւ ընդհանուր արժեքը 100 մլն դոլար է:



Սոցիալապես անապահով խավին աջակցելու նպատակով այս վարկի միջոցներն ուղղվելու են սոցիալական ապահովության ծրագրերի ֆինանսավորմանը՝ նպատակ ունենալով բարելավել նպաստների, թոշակների, գործազրկության նպաստների բաշխման արդյունավետությունը եւ բարձրացնելով հասցեականությունը: Արիստոմենե Վարուդակիսը նշեց, որ, օրինակ, նպաստներ ստացողների 47 տոկոսը պետք է ընդգրկված չլիներ այդ համակարգում եւ ընդհակառակը՝ մեծ թվով իսկապես կարիքավոր ընտանիքներ այդ նպաստները չեն ստանում:

Մրցունակության ապահովման բաղադրիչն ուղղված է ձեռնարկությունների գրանցման ծախսերի նվազեցմանը, պետեկամուտների կոմիտեում առաջնահերթ բարեփոխումների իրականացմանը, հանրային ծառայության օրենքի մշակմանը:

Խոսելով Հայաստանի սոցիալ-տնտեսական ցուցանիշների եւ հունվար-մայիսին արձանագրված 15,7 տոկոս անկման մասին, Արիստոմենե Վարուդակիսն ասաց, որ նման կտրուկ անկման պատճառն անցյալ տարի նույն ժամանակահատվածում արձանագրվող մեծ աճն էր: Նրա կարծիքով, մինչ տարեվերջ անկման տեմպը կնվազի, քանի որ անցյալ տարվա վերջին եռամսյակում աճն արդեն այդքան մեծ չէր: ՀԲ ներկայացուցչի կարծիքով, տնտեսական աճը կկայունանա 0 տոկոսի շրջակայքում: Նա նորից նշեց, որ Հայաստանում տնտեսական անկման տարեկան ցուցանիշը, ՀԲ կանխատեսմամբ, կկազմի 9-10 տոկոս:

ՀՆԱ-արտաքին պարտք ցուցանիշի վերաբերյալ տրված հարցին պատասխանելով, ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարը այն կարծիքը հայտնեց, որ Հայաստանին տրամադրված վարկերը դեռ բավականին գրավիչ են՝ արտոնյալ ժամկետներով եւ ցածր տոկոսներով: Ըստ Արիստոմենե Վարուդակիսի, առաջիկայում ՀՆԱ-ի նկատմամբ պարտքը կարող է հասնել 45 տոկոսի, ինչը բարձր է, բայց կառավարելի: «Ակնկալում ենք, որ տնտեսական վերելքին զուգընթաց ՀՆԱ-պարտքեր հարաբերակցությունը կնվազի մինչեւ 30 տոկոս», ասաց ՀԲ ներկայացուցիչը: Նա նաեւ այն կարծիքը հայտնեց, որ անհրաժեշտ է ակտիվացնել ջանքերը բյուջեի եկամուտներն ավելացնելու ուղղությամբ, եւ կարեւորեց տնտեսական աճի ավելի դիվերսիֆիկացումը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# «Ամերիաբանկը» 5 մլն դոլարի երաշխիք ստացավ Միջազգային ֆինանսական կորպորացիայից

Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) եւ հայկական «Ամերիաբանկը» երեկ պայմանագիր ստորագրեցին բանկին 5 մլն դոլար առեւտրի ֆինանսավորման երաշխիք տրամադրելու մասին:

Ինչպես պայմանագրի ստորագրումից հետո հայտնեց «Ամերիաբանկի» վարչության նախագահ **Արտակ Հանեսյանը**, բանկը ՄՖԿ-ի երաշխիքով միացավ համաշխարհային առեւտրի ֆինանսավորման ծրագրին: Կորպորացիան մինչեւ 100 տոկոս երաշխիքներ կարող է տրամադրել բանկին: Դրանով բանկը հնարավորություն է ստանում միանալու 300 բանկերի ցանցին: Նշելով, որ սա կորպորացիայի հետ համագործակցության առաջին փորձն է, Արտակ Հանեսյանն ասաց, որ բանակցություններ են ընթանում փոքր եւ միջին բիզնեսի ֆինանսավորման նպատակով շուրջ 30 մլն դոլար ներգրավելու նպատակով:

ՄՖԿ-ի կովկասյան տարածաշրջանի տնօրեն **Թոմաս Լյուբեկը** նշեց, որ ՄՖԿ-ն կարեւոր նշանակություն է տալիս Հայաստանի բանկային համակարգին, քանի որ ճգնաժամի պայմաններում կարեւոր է համարում բանկերի դերը տնտեսության խթանման համար: Նա նաեւ հայտնեց, որ իրենց կատարած ուսումնասիրության արդյունքներով «Ամերիաբանկն» ապացուցել է իր կայունությունը:

Խոսելով «Ամերիաբանկի» այս տարվա շահույթի մասին, Արտակ Հանեսյանը տեղեկացրեց, որ հունիսի դրությամբ կազմել է 500 մլն դրամ, ավանդներն աճել են 12 տոկոսով, իսկ ակտիվները՝ երկրորդ եռամսյակում առաջինի համեմատ աճել են 7 տոկոսով, կազմելով 86 մլրդ դրամ:

**Ա. Մ.**

# Հայկական ընկերությունները կարող են օգտվել Վարշավայի բորսայի հնարավորություններից

«Արարատբանկի» նախաձեռնությամբ երեկ տեղի ունեցավ «Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի ֆինանսական շուկաների զարգացումներն ու հեռանկարները եւ Հայաստանը» թեմայով կլոր սեղանը, որին հրավիրված էր Վարշավայի ֆոնդային բորսայի նախագահ եւ գործադիր տնօրեն Լյուդվիգ Սոբոլեւսկին:

Այս նախաձեռնությունը «Արարատբանկի» վարչության նախագահ **Աշոտ Օսիպյանը** պայմանավորեց նրանով, որ հայկական ընկերությունները տարբերաբար միջոցների կարիք են զգում եւ բանկային համակարգից դրանք ստանալուց բացի, կարող են օգտագործել բորսայի հնարավորությունները: Իսկ Վարշավայի ֆոնդային բորսան Կենտրոնական Եվրոպայում խոշորագույնն է եւ կարող է հետաքրքրություն ներկայացնել հայկական ընկերությունների համար:

Հայաստան ժամանելը **Լյուդվիգ Սոբոլեւսկին** բացատրեց իրենց համար արեւելքի շուկաների կարեւորությամբ եւ նշեց, որ լավ կլինի, եթե Վարշավայի ֆոնդային բորսա ներդնողներ գան Հայաստանից: Նա տեղեկացրեց, որ Վարշավայի ֆոնդային բորսան ստեղծվել է 1991-ին՝ 5 ընկերության մասնակցությամբ, իսկ այսօր այստեղ ցուցակված ընկերությունների թիվն անցնում է 400-ից: Այս տարի նախատեսվում է բացել նոր՝ պարտատոմսերի սեգմենտ:

ԿԲ փոխնախագահ **Վաչե Գաբրիելյանը** դրական համարեց Վարշավայի բորսայի այստեղ ներկայացումը, նշելով, որ «Նասդաք Օ Էմ Էքսի» հետ նրա մրցակցությունն ավելի նպաստավոր պայմաններ կստեղծի մեր ընկերությունների համար:

### «Արարատբանկի» ծրագրում՝ նոր բանկի ձեռքբերում

Երեկ «Արարատբանկի» վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը լրագրողներին հայտնեց, որ իր ղեկավարած բանկի ծրագրում մեկ այլ բանկի ձեռքբերման նպատակ կա, որի մասին շուտով հայտնի կդառնա:

**Ա. Մ.**

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

# Հայաստանի քաղաքական վերնախավը փոխելու հրամայականը

*1-ին էջից*

**Մնացածը՝ բռնատիրության չհանդուրժում, սեփական իրավունքների համար պայքար, էլ եսիմ ինչ, իրականությունից բավական հեռու են, քանի որ ինչքան կուզես պայքարի, նախագահը որ երկու ոտքը մի կոշիկի մեջ դներ ու չհամաներեր, ի՞նչ պիտի անեին: Ուզողի մի երեսն է սեւ, չտվողի՝ մյուս, իսկ տվողի՝ երկու երեսն էլ (վերջինը համաներողն է): Մեռնեմ պարզունակ տրամաբանությանը: Դե գիտեք, եթե որեւէ մեկն իրեն հաղթող է համարում, հաղթության սուբյեկտ, ուրեմն եւ՝ պարտվող պետք է, չէ՞: Թե չէ Նարցիսի սինդրոմի հարց առաջ կգա: Բայց այդ բոլորն այնքան էլ կարեւոր չէ, որքան մեկ-երկու նոր վրձնահարվածը հայրենի ընդդիմության՝ արդեն բոլոր մանրամասներով հայտնի կտավին:**

**Քանի որ Տեր-Պետրոսյանը վերջին հանրահավաքին արձակուրդ էր վերցրել, փաստորեն այս հանրահավաքում ստիպված էր աշնան համար պահած իր որոշ մտորումներ կիսել հանրահավաքայինների հետ: Խոսելով իր կողմնակիցներից ոմանց նվնվոցների եւ տրտունջների մասին, թե իր կողմնակիցների մեծագույն մասն ավելի հասուն գտնվեց, քան նրանց դաս տալու հավակնություն ունեցող եւ ինքնահաստատման խնդիրներ հետապնդող փոքրաթիվ անհատները, որոնք հայտնվել են անցած տարվա հունիսի 20-ից հետո դեռ, եւ որ՝ ամենավտանգավորը ոչ թե բացահայտ հակառակորդներն ու արտաքին սադրիչներն են, այլ համակիր ձեւացող այս տեսակի մարդիկ, որոնք, ըստ նրա, փաստորեն շարժումը քայքայում են ներսից՝ կասկածներ եւ հուսալքություն սերմանելով մարդկանց հոգիներում: Ահա: Սա հրապարակային անդրադարձն էր այն տեղեկությունների, որ նրա կողմնակիցների մեջ բավական տարաձայնություններ կան: Նրան ուղղվում են մեղադրանքներ, անգամ խոսք է գնում նրան փոխարինելու մասին, քանի որ նա վերջին ամիսներին խուսափում է վճռական որոշումներ կայացնել: Քննադատողների հետ հարցերը կարգավորելու խնդիրը պետք է լուծեին մինչեւ նոր քաղաքական սեզոն, սակայն այս հանրահավաքով եւ գուցե եւս մեկ արտահերթ հանրահավաքով Տեր-Պետրոսյանի հաշիվները խառնվում են, եւ նա իր խաղաթղթերի մի անկյունը, փաստորեն, ցույց տվեց:**

**Համաներումը համարելով կեղծված ընտրությունների թելադրանքով արված զիջում իշխանությունների կողմից, Տեր-Պետրոսյանն առաջ է գնում՝ դժբախտություն կանխատեսելով մեզ համար այն ժամանակ, երբ քաղաքական բռնությունների եւ ընտրությունների կեղծման պատճառով երկրի նախագահը ստիպված կլինի զիջումներ անել արտաքին ճակատում՝ Ղարաբաղի հարցում, ու, «ի դեպով»՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում նա առաջիկայում լուրջ զարգացումներ է սպասում, որոնք, թերեւս, տերպետրոսյանականներին ստիպելու են եւս մեկ արտահերթ հանրահավաք գումարել: Փաստորեն ինչ-որ պատճառով խանգարվում է Տեր-Պետրոսյանին շատ հարկավոր ամառային արձակուրդը, որի ընթացքում նա կարեւոր որոշումների գուցե պետք է հանգեր, եւ դրա պատճառները պետք է փնտրել նրա ելույթների այն հատվածներում, ուր նա քննադատում է իր կողմնակիցների մեջ նվնվացողներին եւ անհամբերներին, որոնք ուզում էին պայքարը շեղել սահմանադրական ուղուց: Եվ որքան էլ նրա թիմակից Արման Մուսինյանը տարաձայնությունների եւ տարակարծությունների վերաբերյալ բառախաղ անի, պարզ է որ ՀԱԿ-ում ներքին խնդիրներն այն աստիճանի են գլուխ բարձրացրել, որ այդ մասին նրա առաջնորդը բարձրաձայնում է հանրահավաքում: Իսկ ղարաբաղյան խնդրի հետ կապված տերպետրոսյանական ակնարկներում երեւում են անդրօվկիանոսյան ականջներ, փաստորեն դրանք նաեւ նշմար են, որ այս ուժի արեւմտյան կնքահայրերը, սովորական գունավոր հեղափոխությունից ձեռք քաշելով (քանի որ փորձարկեցին՝ ոչ մի խունճուճ մակդիրով ժողովրդավարություն չի ստիպի հայերին իշխանություն տալ), հիմա էլ խառնակչության նոր խաղաթուղթ են խաղարկելու, եւ դա Արցախի խնդիրն է: Մի անգամ դա աշխատել է, չէ՞: Ինչո՞ւ այժմ էլ չփորձել:**

**Դրա հետ մեկտեղ՝ Տեր-Պետրոսյանին արդեն աշնանը նոր հիասթափություն է սպասում, քանի որ արեւմտյան կնքահայրերը, շատ մանրամասներ, որ համադրում ենք, երեւում է, վաղուց արդեն մարդիկ եւ եղանակներ են փնտրում Հայաստանի արմատական ընդդիմության առաջնորդին(ներին) փոխարինողներ գտնելու համար: Դրա համար էլ նոր միֆեր ստեղծելու տարբերակների վրա են աշխատում Հայաստանում, եւ եթե նրանց քյանդրբազությունները Հայաստանում աշխատեն, զարմանալի չպետք է համարել, որ մեկ էլ աշնանային հանրահավաքներում հանդես գան «այլա Նիկոլ» նոր առաջնորդներ:**

**Ընդհանրապես՝ միայն արտերկրի քաղտեխնոլոգները չեն, որ նկատում են, թե Հայաստանի քաղաքական էլիտան հագեցած է հնացած եւ հոգնած մարդկանցով: Հայաստանի իշխանական քաղաքական վերնախավը նույնպես չի փայլում նոր գաղափարներով ու սրահայաց մարդկանցով: Հայրենի քաղաքական դաշտը հիշեցնում է երկար ժամանակ տեղում կանգնած ջուր, որն արդեն տհաճ հոտ է արձակում: Հարկավոր են նոր մարդիկ, նոր գաղափարներ, նոր մոտեցումներ: Բացի այդ՝ ամեն օր նույն երկու տասնյակ մարդուն տարբեր հեռուստաընկերությունների քաղաքական հանդիպումների եթերներում ցույց տալն ու լսեցնելը մահու չափ հոգնեցրել է հայ հասարակությանը: Չենք կարծում, որ դա չեն զգում իրենք՝ մեր հոգնած քաղաքականները, եւ անգամ այդ մասին համարձակվում են խոսել: ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանն էր, չէ՞, որ ասում էր՝ Ղարաբաղի հարցը նոր սերունդն է լուծելու: Այդ նոր սերնդին (խոսքը միայն տարիքով երիտասարդների մասին չէ, այլ ճանապարհը խցանած մի քանի գործիչների պատճառով ուրիշ տասնյակ մարդկանց արհեստական ստվերումը) խանգարողը եւ ճանապարհ չտվողը դուռ է բացում զանազան արտերկրյա գունավոր եւ անգույն հեղափոխությունների համար, որոնք մեր երկրին ոչ մի լավ բան չեն խոստանում:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 7/3/2009 9:42 PM Page 1



# Ֆինանսների նախկին նախարարը դրսից միջոցներ ներգրավելու քայլը ճիշտ է համարում

Ֆինանսների նախկին նախարար **Լեւոն Բարխուդարյանը** երեկ Մամուլի ազգային ակումբում խոսելով իշխանությունների վարած տնտեսական քաղաքականության, մասնավորապես իրականացվող հակաճգնաժամային ծրագրերի մասին, նշեց, որ երբ մեծ անկում է արձանագրվում տնտեսության մեջ, պետությունը առավել ակտիվ դեր պետք է ունենա՝ անկումն առավել սահուն դարձնելու կամ կանխարգելելու համար: Ֆինանսների նախկին նախարարը դրսից միջոցներ ներգրավելու քայլը ճիշտ է համարում, միաժամանակ կարծում է, որ կարեւոր է դրա ճիշտ տեղաբաշխումը:

Այն ներդրումները, որ նախատեսված են կատարել, կարելի էր անել ավելի արագ, ասաց ներկայումս տնտեսական խորհրդատվական կենտրոնի ղեկավար Լեւոն Բարխուդարյանը: Ըստ տնտեսագետի դիտարկման՝ ռիսկերը շատ են, սակայն եթե նախատեսված աշխատանքներն իրականացվեն, ապա բոլոր վարկային ներդրումները, որոնք թելադրում է ճգնաժամը, կլինեն արդարացված: Տնտեսագետը միաժամանակ կարեւորում է, որ վարկային գումարներն օգտագործվեն արդյունավետ: Ֆինանսների նախկին նախարարը նաեւ նկատեց, թե շարունակում է երկրում երկու բաց ապարեզ մնալ, որը խոչընդոտող հանգամանք է. «Ավելի դանդաղ են ընթանում կառավարման համակարգի բարեփոխումները, քան մենք կցանկանայինք: Ճգնաժամից դուրս գալու համար պետք է էլ ավելի բացել դաշտը, խթանել, կատարելագործել մրցակցային միջավայրը եւ վերացնել մենաշնորհները: Կոռուպցիայի դեմ պայքարը շատ կարեւոր է, ճգնաժամից դուրս գալու շատ կարեւոր գործոն է»:

Ասել, թե կա շատ մեծ բացթողում՝ ֆինանսների նախկին նախարարը դժվարացավ: Միայն հավելեց, որ ինքը կցանկանար, որ առավել ուշադրություն դարձվեր գյուղատնտեսությանը որպես շատ կայուն եւ հարատեւ ճյուղի, որը նաեւ արտահանվող է, ունի արտաքին կայուն շուկա:

Նա ճիշտ է համարում օգնությունը մանր եւ միջին բիզնեսին, ֆինանսական կայուն համակարգում բյուջեի դեֆիցիտի ավելացման շնորհիվ բյուջեն կատարելուն: Սակայն, ըստ նրա, կա երկու բաց. դանդաղել են կառավարման համակարգի բարեփոխումները, պետական աշխատողների աշխատավարձերը հետ են մնում մասնավոր հատվածի աշխատավարձերի տեմպերից, հակակոռուպցիոն քաղաքականությունը, շատ մեծ խոչընդոտ է մենաշնորհների առկայությունը, մրցակցային միջավայրի անկատարությունը: Լեւոն Բարխուդարյանը սխալ է համարում նաեւ դրամի արժեւորումը եւ գտնում է, որ այն պետք է արժեզրկել դոլարի նկատմամբ. «Ամենամեծ թերացումը վերջին 6-7 տարիների ընթացքում ես կհամարեմ դոլարի նկատմամբ դրամի աստիճանաբար արժեւորումը»:

Իսկ այն հարցին, թե ինչու՞ կառավարությունը չի պայքարում կոռուպցիայի կամ մենաշնորհների դեմ, Բարխուդարյանը պատասխանեց, որ քաղաքական կամք է պետք դրա համար, եւ օրինակ բերեց կոռուպցիայի դեմ Վրաստանի նախագահ Սաակաշվիլու պայքարի քաղաքականությունը:

Լրագրողներից մեկի հարցին, թե հասարակական հարցումները վկայում են, որ կառավարությանը հասարակությունը չի վստահում: Անվստահության պայմաններում ինչպես կարելի է խոսել կառավարության ծրագրերի հաջողության եւ հասարակությանը դրանց մասնակցության մասին, նա պատասխանեց. «Դժվար է, բայց ձեռք մեկնելու, մեկտեղելու դեպքում անհնարին ոչինչ չկա»: Ըստ նրա՝ միտում կա բնակարանների գների անկման. գործարքների թիվը պակասել է: Սակայն հնարավոր է, որ տեղի ունենա հակառակը. «Բնակարանային շինարարությունը եթե չաճեց, շատ շենքեր այդպես կիսակառույց էլ կմնան, էական աճ կլինի գների»:

Խոսելով 1990-ականների սկզբին Խորհրդային Միության փլուզմամբ պայմանավորված տնտեսական ճգնաժամի մասին, նա նշեց, որ այն ժամանակվա եւ ներկայիս պայմանները անհամեմատելի են: Այն ժամանակ Ղարաբաղում պատերազմ էր, Հայաստանը շրջափակման մեջ էր, կային էլեկտրաէներգիայի մատակարարման խնդիրներ, ՀՆԱ-ի անկումը կազմում էր 50 տոկոս: Դրա հետ մեկտեղ չկար միջազգային կազմակերպությունների եւ տարբեր երկրների ֆինանսական աջակցությունը, ինչպես նաեւ չկար պետական միջոցներից ձեռնարկություններին տրամադրվող օժանդակությունը: «Չնայած դրան, ես համարում եմ, որ այն ծանր ժամանակը շատ վեհ էր եւ , ինչ-որ տեղ, լավագույն տարիներ էին, երբ ժողովուրդը միասնական էր իշխանությունների հետ, այդ միասնականությունը բերեց մեզ հաղթանակների», ասաց Լ. Բարխուդարյանը:

Ն. Ս.

ԵԱՀԿ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑ

# Սերժ Սարգսյան. «Գոհ չեմ բանակցությունների ընթացքից...»

1-ին էջից

Կողմերը մտքեր են փոխանակել նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Նախագահ Սարգսյանն ասել է, որ Հայաստանը հաստատակամ է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցում: Հանրապետության նախագահն ընդգծել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով ադրբեջանական կողմը վերջին ժամանակներս սկսել է ավելի հազվադեպ խոսել Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման ռազմական ճանապարհի մասին: «Համարելով հանդերձ, որ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը որոշակիորեն դրական ընթացք է ստացել,



ես, սակայն գոհ չեմ բանակցությունների ընթացքից, որովհետեւ ադրբեջանական կողմը փորձում է ձեւախեղել ինչպես բանակցությունների ընթացքը, այնպես էլ բուն հակամարտության էությունը», նշել է երկրի ղեկավարը:

ԵԱՀԿ գործող նախագահը ողջունել է նաեւ Հայաստանի նախագահի նախաձեռնությամբ ԱԺ-ի վերջերս հայտարարած համաներումը: Հանդիպումից հետո տեղի է ունեցել նախագահ Սերժ Սարգսյանի եւ ԵԱՀԿ գործող նախագահ, Հունաստանի արտգործնախարար տիկին Բակոյանիսի առանձնազրույցը:

«Պետք է ամեն ջանք գործադրվի պաշտպանելու մարդկային կյանքերը: Յուրաքանչյուր մահ չափազանց շատ է», ղարաբաղյան հակամարտության շփման գծից դիպուկահարներին հեռացնելու ղարաբաղյան կողմի առաջարկի առնչությամբ երեկ Երեւանում՝ արտգործնախարարությունում տեղի ունեցած Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ համատեղ ասուլիսում այսպիսի հայտարարություն արեց ԵԱՀԿ գործող նախագահ, Հունաստանի արտգործնախարար Դորա Բակոյանիսը:

Նախարար Նալբանդյանը նախ շնորհակալություն հայտնեց վերջերս Հունաստանում տեղի ունեցած ԵԱՀԿ անդամ երկրների արտգործնախարարների հավաքի նախաձեռնման ու կազմակերպման համար, ընդգծելով, որ քննարկվում էին կարեւոր հարցեր, այդ թվում՝ անվտանգության նոր համակարգի ստեղծմանն առնչվող խնդիրներ:

Նալբանդյանի խոսքով, Դորա Բակոյանիսի այցելությունը ոչ միայն որպես ԵԱՀԿ գործող նախագահի, այլեւ որպես Հունաստանի արտաքին գերատեսչության ղեկավարի այց է, ուստի նախարարների հանդիպմանը քննարկվել են ոչ միայն ԵԱՀԿ գործունեության, ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ միջազգային այլ իրողությունների վերաբերող հարցեր, այլեւ խնդիրներ, որ առնչվում են հայ-հունական երկկողմ հարաբերություններին: Նալբանդյանը տեղեկացրեց, որ մոտակա ամիսներին նաեւ ԵԱՀԿ աջակցությամբ Հայաստանում կբացվի դիվանագիտական ակադեմիա:

Բակոյանիսն իր հերթին ընդգծեց, որ Հայաստանում է որպես բարեկամ, կարեւորելով ոչ միայն Երեւանում ԵԱՀԿ նոր գրասենյակի բացումը, այլեւ ողջունեց ղարաբաղյան հարցի բանակցային գործընթացում կազմակերպվող նախագահական մակարդակի հանդիպումներն ու առաջընթացը, ինչպես նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացմանն ուղղված քննարկումները:

Հայաստանի արտգործնախարարին ուղղված հարցին, թե ինչպես կարձագանքի Թուրքիայի՝ Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման ուղղությամբ աշխատելու պատրաստակամությանը, Էդվարդ Նալբանդյանը ընդգծեց, որ եթե նման հայտարարություն է արվել, ապա դա միայն ողջունելի է:

Ամեն դեպքում, նախարար Նալբանդյանը հիշեցրեց, որ Թուրքիայի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել բացելու հայ-թուրքական սահմանն առանց նախապայմանների այն դեպքում, երբ նախկինում Թուրքիան առաջադրում էր ԼՂ հարցին եւ ցեղասպանության ճանաչման խնդրին առնչվող պայմաններ: «Թուրքիայից մենք գործնական քայլեր ենք սպասում», հայտարարեց Նալբանդյանը:

Նշենք, որ հուլիսի 2-ի երեկոյան ԵԱՀԿ գործող նախագահը Երեւանում հանդիպել էր Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանին: Վերջինս հանդիպումից հետո հայտարարել էր, թե ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում առաջընթացի առկայության մասին հնարավոր կլինի խոսել «միայն այն դեպքում, երբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դառնա բանակցային գործընթացի մասնակից»:

Սահակյանի խոսքերով, ԵԱՀԿ գործող նախագահի հետ քննարկվել է նաեւ այս հարցը, անդրադարձ է կատարվել նաեւ շփման գծում հրադադարի ռեժիմի խախտման դեպքերին՝ ի թիվս այլ խնդիրների: Լեռնային Ղարաբաղը, ի դեմս նախագահի, խնդրել է ԵԱՀԿ գործող նախագահին օգտագործել կազմակերպության լիազորությունները բանակցությունների այն ձեւաչափի վերականգնման համար, երբ Ղարաբաղը լիարժեք մասնակցում էր բանակցություններին:

ԵԱՀԿ գործող նախագահ Դորա Բակոյանիսը Երեւան էր ժամանել Ադրբեջանից, որտեղ, ադրբեջանական լրատվամիջոցների փոխանցմամբ, խոստացել էր, թե կակտիվացվի ԵԱՀԿ դերը ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում:

# Վիրտուալ համալսարանը համացանցում կմիավորի սփյուռքահայերին

## *ՀԲԸՄ-ի հերթական կրթական ծրագիրը*



Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը ավելի քան հարյուրամյա պատմություն ունի: Այդ ընթացքում կազմակերպությունը Հայաստանում եւ սփյուռքում հիմնել է բազմաթիվ մշակութային, առողջապահական, հասարակական կենտրոններ: ՀԲԸՄ-ն, ի թիվս այլ գործունեությունների, կրթական հաստատություններ հիմնելու լավ համբավ է ձեռք բերել: ՀԲԸՄ-ի կրթական ծրագրերի օրակարգում է Երեւանում վիրտուալ համալսարանի ստեղծումը, որի պաշտոնական մեկնարկը տեղի ունեցավ երեկ Հայաստանի ամերիկյան համալսարանում: «Վիրտուալ ուսուցումը տարբերվում է ավանդականից իր հոգեբանությամբ, դասավանդման նրբությամբ: Բարձր որակ ապահովելու եւ չափանիշներին համապատասխանելու նպատակով համալսարանի մանկավարժները 6-ամսյա պրակտիկա են անցել: Սա Հայաստանում վիրտուալ համալսարան հիմնելու առաջին փորձն է, որ, հուսով ենք, կպսակվի հաջողությամբ», նկատում է պրոֆեսոր, վիրտուալ համալսարանի հիմնադիր նախագահ **Երվանդ Զորյանը**:

Մինչ համալսարանի հիմնումը Զորյանն այցելել է տարբեր գաղութներ, շփվել երիտասարդների հետ, պարզել կրթական ոլորտի հիմնախնդիրները:

«Փաստեցինք, որ տարեց մարդիկ էլ են ցանկանում սովորել, վերհիշել պատմությունը, մշակույթն ու ճարտարապետությունը: Հենց այդ պատճառով տարիքային խտրականություն չկա: Համալսարան կարող են ընդունվել 17-82 տարեկան անձինք», նկատում է նա: Ուսուցումն ընթանալու է վեց լեզուներով՝ նպատակ հետապնդելով ուսուցման ծրագրերում ներգրավվել ավելի շատ մարդկանց: Ամառային շրջանի ժամանակ գրանցվել է ավելի քան 382 անհատ աշխարհի տարբեր երկրներից: Ամառային կիսամյակի ուսուցումն ընթանալու է անվճար, աշնանային կիսամյակի համար կսահմանվի սիմվոլիկ գումար՝ 199 դոլար: Յուրաքանչյուր կիսամյակը կտեւի 9 շաբաթ: Շաբաթական դասերից բացի ուսանողները կարող են քննարկումներ անցկացնել, շփվել աշխարհի տարբեր անկյուններում հայրենակիցների հետ: Համալսարանի աշխատակիցները նկատում են, որ համալսարանի պաշտոնական էլեկտրոնային փոստն ամեն օր թարմացվում է նոր նամակներով, շնորհավորական ուղերձներով ու մաղթանքներով: «Սա իմ հայերենը սովորելու եւ լավացնելու մեծ հնարավորություն է: Երկու տարեկան դուստրս ինձ հետ կրկնում է բոլոր բառերը», ասում է Կարինեն, որը բնակվում է Ուրուգվայում եւ արեւմտահայերեն սկսնակների համար դասընթացը ուսանում իսպաներենով:

Ուսանողներին ոգեւորելու նպատակով կազմակերպիչները մի շարք առավելություններ, արտոնություններ են սահմանել՝ բարձր միավորներ ստանալու կամ ՀԲԸՄ անդամ լինելու դեպքում:

Յուրաքանչյուր դասարանում նախատեսված է 12 աշակերտի մասնակցություն: Երվանդ Զորյանը նկատում է, որ մասնակցության հայտերը հիմնականում գալիս են ամենամեծ գաղութներից՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Ֆրանսիայից: Հայաստանն այդ առումով ցանկում գրավում է 5-րդ հորիզոնականը:

Սփյուռքի փոխնախարար **Ստեփան Պետրոսյանը** ծրագիրը համարում է հաջողված փորձ 21-րդ դարում հայեցի կրթություն եւ դաստիարակություն ապահովելու առումով: «Սփյուռքում հայոց լեզուն չափազանց ծանր վիճակում է: Հայկական դպրոցները հիմնականում վճարովի են, հետեւաբար ֆինանսապես անապահով ծնողները չկարողանալով ուսուցման համար վճարել՝ երեխաներին հանրային դպրոց են տալիս, որտեղ հայոց լեզու, գրականություն, պատմություն առարկաները չեն անցնում: Այս ծրագիրը հնարավորություն կտա հաղթահարելու մի շարք խոչընդոտներ առաջին հերթին հայապահպանման ոլորտում: Վստահ եմ, որ վիրտուալ համալսարանի աշխարհագրությունը ժամանակի ընթացքում կմեծանա»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW 4.QXD 7/3/2009 9:04 PM Page 1



ԱԶԳ

## Ծանոթ-անծանոթ հայեր

# Բնագիտության նվիրյալը. Ամերիկահայ Ջոն Վարդան

*(Նվիրվում է Մ. Նահանգների Անկախության օրվան)*

Ամերիկահայ անվանի քիմիագետ, հանքաբան, ճանապարհորդ, բնախուզական անհավանական արկածների սիրահար Հովհաննես Գարայանը (Ջոն Գարա Վարդան) ծնվել է XIX դ. կեսերին՝ մոտավորապես 1849-ին (որոշ տվյալներով՝ 1906-ին 57 տարեկան էր), Կ. Պոլսում, ունեւոր ընտանիքում: Տասներկու տարեկանում սովորելու մտադրությամբ ծնողները նրան ուղարկել են Վիեննա, ամենայն հավանականությամբ՝ Մխիթարյան միաբանների մոտ: Այնտեղ երեք տարի ուսանելուց եւ հասկապես բնական գիտությունների եւ լեզուների ասպարեզում գիտելիքներ ամբարելուց հետո նա հոր կարողության շնորհիվ



մեկնել է Փարիզ, որտեղ սովորել է եւս երկուսից երեք տարի: Սակայն շուտով, ընտանիքի նյութական միջոցների սղության պատճառով արդեն 14 տարեկան դարձած պատանի Հովհաննեսը, ապրուստ հայթայթելու նպատակով մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Նա Նոր երկիր է ժամանել բամբակագործական Նյու Օրլեանի նավահանգստով, ապա անցել է Միացյալ Նահանգների արեւմտյան ափ, ուր ապրել է չորս եւ ավելի տասնամյակներ:

Մինչեւ 1890-ը նա քիմիագետի իր հմտությունները կիրառել է Յուտայի, Նեւադայի, Կալիֆոռնիայի եւ Կոլորադոյի նահանգներում՝ ոսկու, արծաթի, ալյումինի, պղնձի եւ երկաթի հանքարդյունաբերության ասպարեզում:

Յուտայի նահանգի Դենդի Քրոսինգ շրջանում հանքախուզության ընթացքում իր գիտական կարողությունների շնորհիվ հանգել է այն եզրակացության, որ Կոլորադո գետը, բխելով օգտակար հանքերով հարուստ ժայռոտ լեռնաշղթայից, պետք է, որ իր մեջ կրի այդ լեռների ստորոտներից սրբված ոսկու ավազներ: Ուստի եւ նույն գետի հովիտը հետազոտելու նպատակով 1898-ին գնել է նակույկ, ուր տեղավորել է իր համար անհրաժեշտ իրերը, աշխատանքի գործիքները, սննդամթերքի պաշարը եւ այլն ու սկսել է նավարկել Կոլորադո գետն ի վեր՝ մինչեւ 60 մղոն: Դժբախտաբար, սահանքից անցնելու պահին նակույկը շրջվել է, եւ Հովհաննեսը, ամեն ինչ կորցնելով, հրաշքով փրկվել է՝ հայտնվելով Գրանդ Քանյոն կոչված անմարդաբնակ կիրճի ափեզրին:



Ժամանակին Կ. Պոլսում լույս տեսնող «Բիւզանդիոն» ազգային-քաղաքական, գրական-գիտական օրաթերթը «Հայ հանքագործի մը արկածները» հոդվածում, անդրադառնալով բնագետ Հովհաննեսի ամերիկյան անհավանական արկածներին, գրել է. «Արիզոնայի (Մ. Նահանգներ) թերթերը պատմութիւնը կընեն հանքագործ գիտնական հայու մը, որ շատ տարիներ առաջ, արկածի մը բերմամբ, փակուեր է Քոլորատոյի գետերուն կազմած մեծ հովտին մէջ (Grand Canyon), եւ հոն կապրի առանձին, արտաքին աշխարհէն տարանջատ, իր կեանքին մնացած տարիները նուիրած ըլլալով բնութեան գաղտնիքներուն գործնական ուսումնասիրութեան»:

Հետագայում, Կ. Պոլսում լույս տեսնող ազգային, քաղաքական «Մասիս» շաբաթաթերթը եւս, ներկայացնելով «իրական կեանքի դրուագ մը»՝ հայազգի հանքագործ-գիտնական Ջոն Վարդանի «շահեկան արկածներուն պատմութիւնը», նրան բնութագրել է որպես «Հայ Ռոպէնսօն մը», որը մեկ տասնամյակ առաջ խափանվել էր Գրանդ եւ Գրին գետերի խառնարանը կազմող Կոլորադոյի Գրանդ Քանյոն կոչված կիրճում եւ ապրել արտաքին աշխարհից կտրված, առանձնացած կյանքով՝ նման Դանիել Դեֆոյի հանրահայտ «Ռոբինզոն Կրուզո» վեպի գլխավոր հերոսի արկածներին:

«Մասիս» շաբաթաթերթը, տվյալներ քաղելով «Բիւզանդիոնից», պատկերավոր կերպով նկարագրել է այն անմարդաբնակ միջավայրը, որտեղ հայտնվել էր «Հայազգի Ռոբինզոն Կրուզոն». «...Մէկ կողմը խորունկ հոսանուտ գետն էր, միւս կողմը հազարաւոր ոտք բարձրութեամբ սեպ ժայռերու բարձունք: Վեց շաբաթ [Հովհաննեսը] քալեց կամ մագլցեցաւ, մինչեւ որ անցք մը գտաւ ժայռերու այս կոյտին մէջէն: Ուրիշ ուտելիք չունէր, բայց եթէ Քանեոնի հովտին խոտերը, եւ քաքդուս (հնդկաթզենի, կակտենի) բոյսը, պահ[ա]ծու բակլայի մէկ փոքր տուփէն զատ զոր ջուրերը ցամաք նետած էին իր նակոյկէն: Ժայռերու կոյտին խորը թաղուած սոյն հովիտը, շաբաթներով տեղ, արեւ չի տեսներ բնաւ: 24 ժամուան մէջ հազիւ մէկ քանի վայրկեան ժայռերու պատռուածքի մը մէջէն արեւու շող մը կանցնէր, բայց այնքան տաք որ Վարդան կրնար ապակիի մը օգնութեամբ խոտ բռնկցնել եւ կրակ գոյացնել յիշեալ բոյսը խաշելու համար: Օրերով մագլցելէ ետքը ժայռերու վրայ, կը տեսնէր որ անցք կարծածը փակ էր ետեւի կողմէն, ուստի վար կիջնէր, եւ ուրիշ ժայռի մը կողերուն վրայ կը մագլցէր, որձաքարի նոյն հիւրամերժ պարիսպները գտնելով ամէն կողմ»:

Ջոն Վարդանն ամայի միջավայրում եւ վայրի բնության գրկում ենթարկվել է աներեւակայելի եւ գերմարդկային տոկունություն պահանջող արկածների: Այդ ամենի հետ մեկտեղ, որպեսզի սովամահ չլինի, ստիպված է եղել նույնիսկ օձի միս եւ այլ աներեւակայելի «սնունդ» ճաշակել:

Ճակատագրի բերումով մենության դատապարտված հայազգի գիտնական-հետազոտողն իր ժամանակն ու օրերն իզուր չի անցկացրել, այլ, նոր, անսովոր հանգամանքներից օգուտ քաղելով, սկսել է գործնականում անմիջականորեն ուսումնասիրել բնությունն ու նրա զարմանահրաշ գաղտնիքները:

Երկար դեգերումներից եւ անմարդաբնակ փակուղի միջավայրից ելքեր փնտրելուց հետո Հովհաննեսը վերջապես կարողացել է ճանապարհ գտնել դեպի Յուտայի անապատ: Սակայն 16 օր անապատի մեջ սոված-ծարավ քայլելով, վերջապես ուժասպառ ընկել է անծայրածիր անապատում, մինչեւ որ մոլորյալ ձիեր փնտրող մարդիկ գտել են նրան, խնամել եւ շաբաթներ անց ուշքի բերել: Այսպիսով, Ջոն Վարդանը երկրորդ անգամ է հրաշքով փրկվել ստույգ մահից:

Այնուհետեւ նա անցել է Կոլորադո նահանգի Դենվեր քաղաքը եւ աշխատանքի անցել սղոցարանում, սակայն այստեղ էլ սղոցի տակ կորցրել է ձեռքի չորս մատները:

Կյանքի մատուցած անակնկալ ձախողություններն ու դժբախտությունները չեն ընկճել անհավանական արկածներին ընդառաջ գնացող հայազգի Ջոն Վարդանին, եւ նա, երկու սայլ գնելով, վերադարձել է Գրանդ Քանյոն կոչված կիրճը՝ շարունակելու հանքաբանական իր պրպտումները:

Հետաքրքրաշարժ, բայց եւ վտանգաշատ կյանք ունեցող գիտնականի գործունեության վերաբերյալ ժամանակի ամերիկյան թերթերը գրել են. «Ամերիկայի մէջ հիմա ո՛չ ոք Ճօն Վարդանէ աւելի աղէկ գիտէ Մ. Նահանգաց այն մասերուն երկրաբանութիւնը, հանքաբանութիւնը, բուսաբանութիւնը, կենդանաբանութիւնը, եւ բնութեան բոլոր հրաշալիքները: Տասն եւ վեց տարիէ ի վեր, [նա] հազուագիւտ հաւաքածոյ մը կազմած է անծանօթ հանքային նիւթերու՝ անկոխ քարայրներու խորէն հանուած, թանկագին քարերու, անգիւտ նախապատմական բուսեղէններու, եւն.: Ամէն տարի 4-5 ամիս կը զոհէ Քանեոնի մեծ հովտին խորերը նկարագրելու»:

Ամեն անգամ բազմաթիվ գտածո նմուշներով իր երկու սայլերը լցրած վերադառնալով՝ Ջոն Վարդանն ամերիկացի զբոսաշրջիկների առջեւ հանդես է եկել գիտական դասախոսություններով ու ցուցադրություններով: Ժամանակի թերթերի վկայությամբ, այդ ամենը նա իրականացրել է ի սեր գիտության, առանց որեւէ շահադիտական նկատառումների:

Ինչպես «Բիւզանդիոնը», նույնպես եւ Իզմիրում լույս տեսնող «Դաշինք» քաղաքական-գրական օրաթերթը պատկերավոր նկարագրել են Ջոն Վարդանի արտաքին տեսքն ու նրա ներքին էությունը. «[Նա] Ռոպէնսօն Քրիզօէի երեւոյթն ունի: Մազերը մեծ մասամբ ճերմկցած են: Խոշոր մօրուք մը թողած է, գլխարկ, օձիք, փողկապ՝ անանկ բաներ չի ճանչնար, հագուստներն ինք կարած եւ կարկտած է, բայց ուշիմ դէմք մը ունի, լայն ճակատ, եւ վերջին ծայր բարեկիրթ, բարեհամբոյր մարդ մէ: Հայերէնը մոռցած է բոլորովին: Անգլիերէն լեզուով իր գիտական բանախօսութիւններն յոյժ շահեկան են, եւ գեղեցիկ առոգանութեամբ մը կ'արտասանէ: Կ'ըսէ թէ. «Ես բնութեան մէկ զաւակն եմ: Չափէն աւելի քաղաքակրթուեր ենք: Ես ահա՛ դէպ ի բնութիւն կվերադառնամ»: Բնութեան սիրահար մ'է, եւ արդարեւ Քոլորատոյի մեծ գետահովիտն իրեն յատուկ աննկարագրելի գեղեցկութիւնովը դիւթեր, հմայեր է այս տարօրինակ մարդը»:

«Կէս դար ետքը. Նոր աշխարհէն վերադարձող մը. Տարօրինակ Հայ մը. Իզմիր կը հասնի Երեքշաբթի» վերտառությամբ հոդվածում «Դաշինք» օրաթերթը 1911-ի հունվարյան համարներից մեկում հաղորդել է, որ Ջոն Վարդանն այդ օրերին ԱՄՆ-ից ժամանել է Իզմիր: Նույն թերթը տեղեկություններ է հաղորդում նաեւ բնօրրանում թողած նրա հարազատների մասին. եղբայրը ջութակահար Հարություն Գարայանն էր, իսկ քույրը՝ ողբերգական վախճան ունեցած նշանավոր դերասանուհի Մարի Նվարդն էր: Հարազատներն երկար ժամանակ Հովհաննեսին անհետ կորած են համարել, սակայն «Բիւզանդիոնի» 1906-ի օգոստոսի 16-ի համարում կարդալով ամերիկյան թերթերից նրա մասին արտատպված տեղեկությունը, բազմաթիվ հարցուփորձերից հետո կարողացել են գտնել նրան եւ հրավիրել Իզմիր՝ այցի: 1908-ին Ջոն Վարդանն այցելել է նաեւ Պոլսում բնակվող իր քրոջը՝ Տիրուհի-Շուշանիկին:

Այսպիսին էր ամերիկահայ Ջոն Վարդանի հետաքրքրաշարժ կյանքը, որը նա լիովին եւ ինքնամոռաց նվիրել էր հանուն եւ ի շահ բնագիտության: Հետագայում շատերը շարունակեցին նրա սկսած գործը, սակայն գիտության սիրույն վտանգաշատ արկածներին ընդառաջ գնացող Ջոն Վարդանի յուրահատուկ կերպարը, եռանդն ու զրկանքներով լի կյանքը բացառիկ օրինակ են հայ եւ օտար հետազոտողների համար:

**ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ**
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՄՈՆՐԵԱԼ

## «Թեքեյան մրցանակի» հանձնում Ատոմ Էգոյանին

**«Ազգը» մայիսի 16-ի համարում տեղեկացրել է Մոնրեալի Թեքեյան մշակութային միության (ԹՄՄ) կազմակերպած կանադահայ տասը հռչակավոր արվեստագետների մեծարման հանդիսության մասին, որը տեղի էր ունեցել «Մաունթ Սթիվն» ակումբում մայիսի 2-ին: Իր նորագույն ֆիլմի՝ «Քլոյեի» նկարահանման աշխատանքների հետեւանքով աշխարհահռչակ կինոռեժիսոր Ատոմ Էգոյանը, որը նույնպես արժանացել էր մրցանակի, չէր կարողացել ներկա գտնվել հանդիսությանը:**

**Ըստ Կանադայում լույս տեսնող «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթի հունիսի 15-ի համարի հաղորդագրության, հանդիսության կազմակերպիչ, վարչության փոխատենապետ Զարեհ Ոսկանյանն ու վարչության մամուլի կցորդ Մարիա Քեչյանը ավելի ուշ Տորոնտոյում հանդիպում են ունեցել Էգոյանի հետ եւ նրան հանձնել Արտո Չաքմաքչյանի պատրաստած հասուկ արձանիկը:**

**Ատոմ Էգոյանը երախտագիտությամբ հիշել է, որ Մոնրեալի ԹՄՄ-ն նշանակալի դեր է կատարել իր ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնական կյանքում: Այնտեղ է իր առաջին քայլերը կատարել ֆիլմարվեստի բնագավառում եւ այնտեղ է ծանոթացել իր ապագա կողակցի՝ Արսինե Խանջյանի հետ:**

Հ. Ծ.

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

## Ի պատիվ Օլգա Բրուսյանի

**Հունիսի 25-ին Բելմոնտի (Մասաչուսեթս) Սուրբ Խաչ հայկական կաթոլիկական եկեղեցում տեղի է ունեցել պատվասիրություն նվիրված Օլգա Բրուսյանին:**



**Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդագրության, հարգարժան տիկին Բրուսյանը «Հայ կանանց միջազգային ասոցիացիայի» (ՀԿՄԱ) երեք հիմնադիրներից մեկն է եղել, որ 1991 թվականին Եվա Մեծորյանի եւ Բարբարա Մերգերյանի համագործակցությամբ ստեղծել է այդ կազմակերպությունը՝ նպատակ ունենալով զբաղվել հայ կանանց հուզող խնդիրներով, անկախ քաղաքական կամ կրոնական համոզմունքներից:**

**Բրուսյանը ծնվել է Բուխարեստում (Ռումինիա), մեծացել Կենտրոնական Եվրոպայում եւ Մերձավոր Արեւելքում: Եղել է ՀԿՄԱ-ի տնօրենների խորհրդի նախագահ: Նաեւ հիմնադրել է եւ նախագահել «Պորտլենդի, Մեյնի Ալյանս Ֆրանսեզը», որն իր հարկի տակ ընդունել եւ պատվել է համբավավոր շատ մարդկանց, այդ թվում նաեւ Շառլ Ազնավուրին: Եղել է Քեմբրիջ-Երեւան քույր քաղաքների ասոցիացիայի տնօրենների վարչության անդամ:**

**Ի նշանավորումն նրա ազգանվեր ծառայությունների ՀԿՄԱ-ն հիմնել է Օլգա Բրուսյանի անվան ուսանողական թոշակ:**

Հ. Ծ.

AZG NEW 5.QXD 7/3/2009 9:03 PM Page 1



# Մեդվեդեւը «լայնաժպիտ» ընդունեց Ահմադինեժադին

Իրանի նախագահական ընտրությունների կապակցությամբ Ռուսաստանում կարծիքներ հնչեցին, թե ինչքանո՞վ է արդարացված, որ Մոսկվան լավ հարաբերություններ է պահպանում ԱՄՆ-ի եւ առհասարակ «քաղաքակիրթ» աշխարհի կողմից վտարյալ երկրների՝ Իրանի, Սիրիայի, Հյուսիսային Կորեայի եւ մի քանի այլ պետությունների հետ: Հետեւությունները հակասական էին. եթե մի կողմը պնդում է, թե նման քաղաքականությունը Ռուսաստանին ոչինչ չի տալիս, ապա մյուս կողմը դրա մեջ տեսնում է աշխարհաքաղաքական ազդեցիկ կռվաններ: Համենայն դեպս, երբ Մոսկվան թուլություն է հանդես բերում տվյալ ասպարեզում, նրա տեղը անմիջապես գրավում է Չինաստանը (օրինակ, Հյուսիսային Կորեայում): Կոնկրետ Իրանի առնչությամբ միջազգային ասպարեզում այդ երկու երկրները համարժեք են գործում. ըստ էության երկուսին էլ գրավում է առաջինի ընդգծված հակաամերիկյան կեցվածքը:

Սակայն բոլորն են հասկանում, որ իրանական գործոնի գլխավոր շարժիչ ուժն այն է, որ այդ երկիրը ինքն է ստիպում հաշվի նստել իր հետ: Թեհրանը մոտ է միջուկային զենքի ստեղծմանը (եթե չի ստեղծել), օրը օրի արդիականացնում է հեռահար հրթիռատեխնիկան, զարգացնում ատոմային էներգետիկան, ունի հզոր բանակ, ֆանատիզմի հասնող մարտական ոգի եւ այլն: Իրանի ընդերքը պարունակում է համաշխարհային նավթապաշարների 11 տոկոսը՝ 21 միլիարդ տոննա (չորրորդ տեղը աշխարհում): Նավթի ամենամյա հանույթը կազմում է 180-190 միլիոն տոննա, որի մեծ մասը արտահանվում է: Ընդ որում, իրանական նավթը բարձրորակ է եւ մրցունակ (մեկ բարելի ինքնարժեքը երկու դոլար է): Իսկ բնական գազի պաշարներով Իրանը զիջում է միայն Ռուսաստանին՝ համաշխարհային պաշարների 18 տոկոսը:

Ակներեւ է, որ հենվելով տնտեսական ու կրոնագաղափարական կարողության վրա, հազարամյակների պատմություն ունեցող պարսկական քաղաքակրթությունը փորձում է նոր դարամուտին հառնել, ինչպես ասում են, նոր խմբագրությամբ եւ դառնալ իր կայսերապետական փառավոր անցյալի արժանավոր ժառանգորդը: Եվ այս ասպարեզում շոշափելի են Մահմուդ Ահմադինեժադի ծառայությունները. իրանցիներին հրապուրում են երկիրը միջուկային հզոր տերություն դարձնելու նրա համառ ու արդյունավետ մաքառումները: Օրինաչափ էր, որ օրերս Եկատերինբուրգում Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը «լայնաժպիտ» ողջունեց Իրանի վերընտիր ղեկավարին: Հաշվի է նստում նրա հետ:

Չի կարելի ասել, թե Ռուսաստանին չի մտահոգում Իրանի միջուկային ծրագիրը: Ի վերջո դրա իրագործման դեպքում տարածաշրջանում միջուկային զենք ստեղծելուն ձեռնամուխ կլինեն Եգիպտոսը, Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Ալժիրը եւ այլ երկրներ: Մոսկվան հանդես է գալիս ՄԱԳԱՏԷ-ի կողմից տեղական այցերի պահպանման օգտին, բայց դեմ է զանազան պատժամիջոցների կիրառմանն ու առավել եւս ուժային ներգործությանը (եթե չես կարող հաղթել, ապա համագործակցիր): Ռուսները բուն Իրանում ունեն նաեւ զգալի տնտեսական շահեր՝ ատոմակայանի կառուցում, զենքի առեւտուր եւ այլն:

Կա նաեւ նրբին մի պարագա: Իրանը դարձել է մուսուլմանական աշխարհի ազդեցիկ երկրներից մեկը եւ ռուս-իրանական հարաբերությունների վատթարացման դեպքում վերջինս կարող է խնդիրներ ստեղծել ներռուսաստանյան մուսուլմանական տարածաշրջաններում: Մանավանդ որ կա նախադեպ՝ միայն իր «բարեգործական» (հետախուզական) էքսպանսիայով Թուրքիան Ռուսաստանում ուժեղացնում է իսլամիստական տրամադրությունները: Մոսկվայի համար այլ հարց է, երբ Իրանը խառնում է ամերիկացիների պլանները Իրաքում, Աֆղանստանում, Պաղեստինում: Հենց միայն դրա համար Մեդվեդեւը կամ Պուտինը սիրահոժար կսեղմեին պարսիկ ղեկավարի ձեռքը:

Հազիվ թե իր նախագահական երկրորդ ժամկետում Ահմադինեժադը համակրանքով լցվի ամերիկացիների ու առավել եւս Իսրայելի նկատմամբ: Ահա եւ ռուս ռազմական փորձագետները չեն բացառում վերջիններիս կողմից Իրանի միջուկային եւ ռազմական օբյեկտներին ատոմային հարվածներ հասցնելու հավանականությունը: Եվ որպես դրա աղետալի հետեւանք են դիտում Ադրբեջանով իրանցի միլիոնավոր ադրբեջանցիների ու քրդերի արտահոսքը Ռուսաստան: Եվ, իհարկե, մեկնաբանները չեն մոռանում հիշատակել, որ փախստականների հեղեղի իմաստով շատ ավելի անմխիթար վիճակում կհայտնվի մեր փոքրիկ Հայաստանը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

**Հ. Գ. Որպես Իրանի իրադարձությունների վերաբերյալ տարբնույթ, սուբյեկտիվ եւ նույնիսկ էկզոտիկ լրատվության նմուշ «Ազգի» ընթերցողներին եմ ներկայացնում ռուս նացիոնալիստական «Զավտրա» թերթում հրապարակված մի տեղեկություն առանց մեկնաբանության:**

**«Ինչպես հաղորդում են Թեհրանից, Իրանում ծավալված հակակառավարական ելույթները ունեն հստակ արտահայտված էթնիկական բաղկացուցիչ, ընդ որում Ահմադինեժադի դեմ առավել ակտիվ են հանդես գալիս հայ համայնքի ներկայացուցիչները, որին վերջին ժամանակներս միացել են ադրբեջանցի նացիոնալիստները: Իրադարձությունների նման զարգացումը մեր սկզբնաղբյուրները ուղղակիորեն կապում են իսլամական աշխարհի նկատմամբ Բարաք Օբամայի հռչակած «Նոր կուրսի» հետ: Ներկայումս ԱՄՆ-ը մտադիր է այդ աշխարհի վրա ոչ թե ճնշում գործադրել դրսից, այլ քայքայել ներսից, որպես ընդդիմություն օգտագործելով զանազան ազգային-կրոնական խմբեր, որոնց առավել բարենպաստության կարգավիճակ կտրամադրվի ֆինանսական, կազմակերպական եւ լրատվական բնագավառներում»:**

# Ճապոնիայի խորհրդարանը ընդունեց օրենք Կուրիլների մասին

**Ճապոնիայի խորհրդարանի վերին պալատը հուլիսի 3-ին միաձայն ընդունել է օրենք, որը Իտուրուպ, Շիկոտան, Կունաշիր կղզիները եւ Հաբոմայի կղզեխումբը ճանաչում է Ճապոնիայի անկապտելի մասը եւ կոչ է անում միջոցներ ձեռնարկել դրանք վերադարձնելու նպատակով: Այդ մասին հաղորդում է Կիոդո Կուսին գործակալությունը: Ավելի վաղ համանման օրենք էր ընդունել խորհրդարանի ստորին պալատը:**

**Ռուսաստանը գտնում է, որ հիշյալ կղզիները մտնում են ռուսական Կուրիլյան կղզիների կազմի մեջ, վկայակոչելով 2-րդ աշխարհամարտի արդյունքները: Մինչդեռ Ճապոնիան հիմք է ընդունում առեւտրին եւ սահմաններին վերաբերող Սիմոդի տրակտատը: 1855 թ. ստորագրված այդ փաստաթուղթը ռուս-ճապոնական առաջին պայմանագիրն է: Փաստաթղթի համաձայն ռուս-ճապոնական սահմանն անցնում է Իտուրուպ եւ Ուրուպ կղզիների միջեւ, որոնց անունները ճապոնական են:**

**Ճապոնիայի խորհրդարանի զույգ պալատների ընդունած օրենքը քննարկվելու է ռուս-ճապոնական բանակցություններում, որը «Մեծ ութնյակի» գագաթաժողովի շրջանակներում տեղի կունենա Իտալիայի Ակվիլա քաղաքում:**

**Փաստաթուղթը մասնավորապես անայցագիր ռեժիմ է նախատեսում Կուրիլյան կղզիներ այցելող ռուսաստանցիների եւ այդ կղզիներն իրենց հայրենիքը համարող ճապոնացիների համար:**

**Հունիսի 11-ին, երբ խորհրդարանի ստորին պալատը ընդունեց օրենք Կուրիլների նկատմամբ Ճապոնիայի ինքնիշխանության մասին, Ռուսաստանը դա անվանեց «շատ ցավալի» փաստաթուղթ եւ բողոքով դիմել էր Յուժնո-Սախալինսկում գտնվող Ճապոնիայի գլխավոր հյուպատոսությանը:**

# Կանխվել է Աբբասի դեմ «Համասի» մահափորձը

Պաղեստինյան «Ֆաթհ» շարժման մասնակիցները հուլիսի 3-ին հայտարարել են, որ կանխվել է Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի դեմ ծրագրված մահափորձը: Ինքնավարության տարածքում ձերբակալվել են «Համաս» արմատական շարժման գրոհայիններ: «Հաարեց» թերթի տվյալների համաձայն, նրանք խոստովանել են, որ հետեւել են Աբբասի տեղաշարժերին եւ նրա անվտանգության ծառայության աշխատակիցներին:

«Ֆաթհում» վստահ են, որ ձերբակալվածները Մահմուդ Աբբասին սպանելու մտադրություն են ունեցել: Շարժման պաշտոնական ներկայացուցիչ Ֆահմի Զարիրը հայտարարել է, որ գրոհայինները ձգտում են խափանել Կահիրեում վարվող «Ֆաթհ»-«Համաս» բանակցությունները, ինչպես նաեւ ապակայունացնել Այսրհորդանանի իրադրությունը:

«Համասի» 10 գրոհայինների ձերբակալության մասին հայտնի էր դարձել հուլիսի 1-ին: Բայց այն ժամանակ Պաղեստինյան ինքնավարության իշխանությունները կարծել էին, թե նրանք ուզեցել են սպանել մի քանի զորապետի եւ դրանով իսկ խափանել բանակցությունները: Ձերբակալվածների մոտ հայտնաբերվել են զենք, քարտեզներ եւ ենթադրյալ զոհերի լուսանկարները: Հաղորդվում է նաեւ, որ գրոհայինները մտադրվել էին պայթեցնել պաղեստինյան ոստիկանության շտաբը:

«Ֆաթհը» եւ «Համասը» մայիսյան բանակցությունների ընթացքում պայմանավորվել էին Գազայում ստեղծել անվտանգության ընդհանուր համակարգ: Ներկայումս Գազայի հատվածը «Համասի» վերահսկողության տակ է, Այսրհորդանանը՝ «Ֆաթհի»: Հունիսին Մահմուդ Աբբասը խոստացավ բանտերից ազատ արձակել «Համասի» անդամներին:



# Վճռվել է կարճել դատական հայցը ընդդեմ ցեղասպանության դասավանդման

**Բոստոնի շրջանային դատարանի գլխավոր դատավոր Մարկ Վուլֆը վճռել է կարճել մոտ չորս տարի ձգձգվող «Գրիզուլդն ընդդեմ Դրիսկոլի» դատական հայցը, տեղեկացնում է Թոմաս Նեշը «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հունիսի 20-ի համարում:**



*Դատավոր Մարկ Վուլֆ*

**Ըստ հաղորդագրության, «Ամերիկաթուրքական ասոցիացիաների ասամբլեան» (ԱԹԱԱ), ավագ դպրոցի 2 դասատուների եւ մեկ ուսանողի հետ 2005 թվականի հոկտեմբերին դատական հայց է հարուցել Մասաչուսեթսի կրթության վարչության (ՄԿՎ) դեմ՝ բողոքելով խոսքի ազատության սահմանափակումների եւ հակացեղասպանական տեսակետների անտեսման համար: Խնդրի էությունն այն է եղել, որ ուսումնական ծրագրի «Ցեղասպանության եւ մարդու իրավունքների հարցեր» բաժնում ընդգրկված է եղել Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութերի ուսուցումը:**

**«Երբ մենք ցեղասպանության ուսումնական ծրագիրն էինք մշակում, հիմնվում էինք փաստերի վրա, եւ երբ թուրքական ասոցիացիան սկսեց իր պայքարը, հասկացանք, որ դա թուրքերի ժխտողական խաղի մաս էր կազմում: Վերջապես արդարությունը վերականգնվեց: Շատ տրամաբանական է», նշել է այդ առթիվ սենատոր Սթիվն Թոլմանը:**

**Որոշումը մեծապես հանգստացրել է ամերիկահայ համայնքին եւ այնպիսի կազմակերպություններին, ինչպիսիք են Ամերիկայի հայկական համագումարը, Հայ իրավաբանների ասոցիացիան, Հայ դատի գրասենյակը, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան, Իռլանդական ներգաղթի կենտրոնը, Իրավունքի եւ սոցիալական գործողությունների իրեական դաշինքը, Սեւամորթների առաջխաղացման ազգային ասոցիացիան, որոնք իրենց նամակներով եւ հաղորդագրություններով նեցուկ են կանգնել Հայ դատին:**

**«Սա մեծ հարված էր ԱԹԱԱ-ին եւ նրա ծրագրին, որովհետեւ եթե հայցը բավարարվեր, նրանք նույն ձեւով վարվելու էին նաեւ մյուս դպրոցների ուսումնական ծրագրերի հետ: Վճիռը մեկընդմիշտ փակեց նրանց քայքայիչ ճանապարհը», մեկնաբանել է Հայկական համագումարի անունից Վան Գրիգորյանը:**

**ԱԹԱԱ-ի դատապաշտպաններից Հարվի Սիլվերգլեյթն իր հերթին դժգոհանք է արտահայտել եւ նշել, որ կպահանջվի վերանայել այդ որոշումը:**

**Դատավոր Վուլֆը անդրադառնալով իր վճռին, նշել է, որ ուսումնական ծրագիրը ոչ մի ուսուցչի չի պարտադրում այլ տեսակետներ չքննարկել դասավանդման ընթացքում:**

Հ. Ծ.

# Օբաման հարցազրույց է տվել ռուսական ԶԼՄ-ներին

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հուլիսի 6-8-ը պաշտոնական այցով կլինի Ռուսաստանում: Հինգշաբթի օրը նա բացառիկ հարցազրույց է տվել ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությանը եւ «Ռոսիա» հեռուստաալիքին:**



**Ռուսական ԶԼՄ-ներին տված առաջին հարցազրույցում ԱՄՆ նախագահը խոսել է երկկողմ հարաբերությունների եւ երկու երկրների անելիքների մասին, բնութագրել ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւին եւ վարչապետ Վլադիմիր Պուտինին: Օբաման խոսել է նաեւ զինաթափմանն ուղղված ԱՄՆ ծրագրերի մասին:**

**Օբամայի խոսքերով, ԱՄՆ-ը ձգտում է Ռուսաստանի հետ բոլոր հարցերի առթիվ հարաբերությունները կառուցել իրավահավասարության հիման վրա:**

**Հարցազրույցը ռուսական հիշյալ լրատվամիջոցներով ամբողջությամբ հրապարակվելու է հուլիսի 4-ին, իսկ առայժմ հայտնի են վերոշարադրյալը եւ երկկողմ լայն համագործակցության հնարավորությունների առնչությամբ Օբամայի արտահայտած լավատեսությունը: Նախատեսվում է նաեւ համատեղ պայքարել ահաբեկչության դեմ, կառուցողական համագործակցություն ծավալել Իրանի միջուկային ծրագրի հարցում:**

# Բայդենն անսպասելիորեն մեկնել է Իրաք



ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը երեկ անսպասելի կերպով մեկնել է Իրաք: Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ նախագահ Բարաք Օբաման նրան խնդրել է հետեւել Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման ընթացքին:

Իրաքում Բայդենը հանդիպումներ կունենա այդ երկրի նախագահ Ջալալ Թալաբանիի, վարչապետ Նուրի ալ Մալիքիի եւ խորհրդարանի նախագահ Այադ ալ Սամարայիի հետ:

Սա ԱՄՆ փոխնախագահի պաշտոնում Բայդենի առաջին այցելությունն է Իրաք: Բայց նա քանիցս եղել է այդ երկրում, երբ զբաղեցնում էր Սենատի արտաքին քաղաքականության հանձնախմբի նախագահի պաշտոնը:

Բայդենի ներկա այցելությունը ձեռնարկվել է Իրաքի քաղաքներից ամերիկյան զորքի դուրսբերման ավարտից ընդամենը մի քանի օր անց:

# Անանյանն ընդդեմ Դավոյանի

## Կռվի դաշտ են դուրս եկել երիտասարդ գրողները

«Իսկ դուք ո՞ւմ եք ընտրելու հուլիսի 4-ի համագումարի ժամանակ՝ Ռազմիկ Դավոյանի՞ն, թե՝ Լեւոն Անանյանին»: Սա կարող է գրավել առաջին հորիզոնականը որպես վերջին մեկ շաբաթվա ընթացքում հայ գրողների օգտագործած ամենատարածված հարց: Եթե նախկինում գրողները միմյանց վիրավորում էին՝ միայն թե չաշխատեին, ապա այժմ գտել են չաշխատելու այլ տարբերակ: Այս հարցն են տալիս ու սկսում սեփական թեկնածուի «նախընտրական քարոզարշավը»՝ սկսելով մանկությունից, հասնելով երիտասարդություն, գրական կյանք ու գործունեություն: «Թեկնածուի» գովքին զուգահեռ ներկայացնում են նաեւ «հակառակորդի» սխալները, թերությունները, գրական առումով անտաղանդությունը: Չգիտեմ, գրողների միությունում իսկապե՞ս հավատում են, որ աթոռակռիվ չկա, սակայն երեկ «Հայելի» ակումբում **Աբգար Ափինյանը** նկատում է, որ խնդիրը աթոռակռիվը չէ: «Գզվռտոցի պատճառն ի՞նչ է», **«Ազգ»-ի** հարցը Ափինյանն այսպես մեկնաբանեց. «Գրողների միության փրկությունը, երիտասարդությանը ստեղծագործելու հնարավորություն տալ, արժանավորին գնահատելն ու մրցանակ շնորհելը»:




Քանի որ «ավագ գործընկերները» միմյանց թե՛ մամուլով, թե՛ բանավեճերում ամեն ինչ ասել էին, ապա երեկ բանավեճի էին ուղարկել երիտասարդ գրողներին՝ մեկը «դավոյանական», մյուս երկուսը՝ «անանյանական» (ասում են վերջին հատվածում գրողները բաժանվել են երկու հատվածի ու միմյանց հենց այդպիսի բնորոշում են տալիս):

Բանաստեղծ **Վահե Արսենը** նկատում է, որ ՀԳՄ նախագահի ով լինելը որեւէ կապ չունի բանաստեղծի ստեղծագործության, տաղանդի հետ: «Ոմանց թվում է, որ իրենց ապաշնորհության մեջ մեղավորը նախագահն է»:

Արձակագիր **Միքայել Աբաջյանը** համամիտ չէ Արսենի ձեւակերպման հետ: Ըստ նրա, գրողների միությունը չպետք է ղեկավարի անտաղանդ, բարոյականությունից զուրկ անձնավորություն: Թեպետ Աբաջյանը Անանյանին այդպիսի բնորոշում չտվեց, սակայն այն փաստը, որ այսօրվա ընտրության ժամանակ իր ձայնը տալու է Ռազմիկ Դավոյանին՝ կարծիք է ստեղծում, որ խոսքերը վերաբերում էին հենց ՀԳՄ նախագահին: «Անանյանը չի կարող տաղանդ բաշխել, սակայն կարող է տաղանդը գնահատել. ինչը չի անում եւ մրցանակ է շնորհում անարժաններին», ասաց Աբաջյանը: **«Ազգ»**-ի խնդրանքին՝ թվել մի քանի անարժանների անուններ, որոնք մրցանակ են ստացել, անցավ ապարդյուն. Աբաջյանը կոռեկտ չհամարեց անուններ թվել: Երիտասարդ գործընկերոջն օգնության եկավ Աբգար Ափինյանը. «Օրինակ Դավիթ Հովհաննեսի գիրքը, որ մրցանակ ստացավ»: «Պետք է հաշվի առնել, թե տվյալ ստեղծագործությունը ո՞ր գրքերի համեմատությամբ է մրցանակ ստանում: Ինչ վերաբերում է Դավիթ Հովհաննեսի գրքին, եթե ես էլ լինեի ժյուրիի կազմում, նրան կտայի մրցանակ, որովհետեւ մնացածը...», ասաց երիտասարդ գրաքննադատ **Արքմենիկ Նիկողոսյանը**: Վերջինս հիշեց, որ երբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը որոշեց մրցանակ հանձնել արվեստի բնագավառում կատարած գործունեության համար՝ գրականության ոլորտում մրցանակ չշնորհվեց: «Ժյուրիի նախագահ Ռազմիկ Դավոյանը մրցանակի որեւիցե մեկին չարժանացրեց: Այդ ժամանակ մամուլը գրում էր, որ Դավոյանը նախանձից ելնելով է հրաժարվել որեւիցե մեկին մրցանակ տալ: Այս ամենը մի՛ մոռացեք: Գրողները հավակնոտ կերպարներ են: Չեմ ժխտում, որ չափանիշերի որոշակի անկում կա, սակայն հակառակ թիմում էլ չեմ տեսնում մարդու, ով միությունում բարեփոխումներ կկատարի», նշեց նա:

«Ո՛չ, այդ մարդը Ռազմիկ Դավոյանն է», ընդդիմացավ Աբաջյանը:

Նա էլ Անանյանի աշխատանքը գոհացուցիչ չի համարում: «8 տարվա ընթացքում որեւէ կերպ գրականությանը չի նպաստել, թայֆայական շրջապատ կա, բոլորի շահերից է ելնում, որպեսզի շարունակությունը լինի առանց Անանյանի»:

Վահե Արսենն էլ բացառում է նախկինների վերադարձը (Ռազմիկ Դավոյանին- Հ.Հ.) եւ ընտրելու է Լեւոն Անանյանին: Նա փաստում է, որ երբեւէ մրցանակ չի ստացել, սակայն ընտրում է, որովհետեւ միությունում կա երիտասարդության իսկայական բանակ, որոնք իսկապես տաղանդավոր ստեղծագործողներ են: «Անանյանը ո՛չ առաջինն է, ո՛չ էլ վերջինը: Նրանից լավերն էլ կլինեն, վատերն էլ»:

Արքմենիկ Նիկողոսյանը Ռազմիկ Դավոյանին համարում է արդի գրականության լավագույն բանաստեղծներից մեկը, սակայն ընտրելու է Անանյանին, որովհետեւ լավ գրող լինել դեռեւս չի նշանակում կարողանալ կառավարել միությունը: Այնուհետեւ ասուլիսին որպես հյուր մասնակցող Աբգար Ափինյանի եւ Արքմենիկ Նիկողոսյանի միջեւ փոքրիկ բանավեճ սկսվեց: Հիշեցին հին ու նոր, արածն ու չարածը: Ափինյանն անդրադարձավ Անանյանի ստեղծագործական տաղանդի բացակայությանը, Նիկողոսյանն էլ խնդրեց քննարկել ոչ թե Անանյանի տաղանդը, այլ վարչական գործունեությունը: Նա համաձայն է, որ միությունում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք հանդիպումների ժամանակ քննարկվում են, սակայն վստահ է, որ Անանյանը կկարողանա այդ հարցերը լուծել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ստորագրվեց հայ-սիրիական փոխըմբռնման հուշագիր

**«Ազգը»** անդրադարձել է Հայաստանում հունիսի 29-ից հուլիսի 4-ն անցկացվող Սիրիայի մշակույթի օրերին: Այդ նպատակով Հայաստան ժամանած ՍԱՀ մշակույթի նախարար, դոկտոր Ռիադ Հասան Աղայի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՀՀ վարչապետի, ԱԺ նախագահի, Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի, ՀՀ մշակույթի, արտգործնախարարների հետ, այցելեցին Մատենադարան, թանգարաններ, պատմական վայրեր: Իսկ «Զուլնար» ազգագրական եւ «Կամուրջներ» համույթները համերգներով հանդես եկան Երեւանում, Գորիսում ու Վանաձորում: Մալաթիա-Սեբաստիա համայնքի Զորավար Անդրանիկի հուշարձանի մոտ նրանց վերջին ելույթներով եզրափակվեց Սիրիայի մշակութային օրերի ծրագիրը: Մեր երկրում անցկացվող Սիրիայի մշակույթի օրերի ձեռքբերումը ոչ միայն ընձեռված հնարավորություն էր հաղորդակից լինելու ինքնատիպ մշակույթին, այլեւ ՀՀ մշակույթի եւ ՍԱՀ մշակույթի նախարարությունների միջեւ փոխըմբռնման հուշագրի նոր փաստաթուղթ ստորագրվեց, որը երկու երկրների միջեւ մշակութային հետագա համագործակցության նորանոր հեռանկարներ կբացի, մասնավորապես թարգմանական, թանգարանագիտության, հնագիտության, ինչպես նաեւ համերգային փոխանակումների ու համատեղ ֆիլմարտադրության ոլորտներում, տեղեկացրեց ՀՀ մշակույթի փոխնախարար Դավիթ Մուրադյանը ու ՍԱՀ մշակույթի փոխնախարար Մուհամադ Թուրքիալ Սայեդի հետ ստորագրեցին հուշագիրը: Ներկա էին՝ փոխնախարար Արթուր Պողոսյանը, ՍԱՀ-ում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանը, ՀՀ-ում ՍԱՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Աբդուլ Համիդ Սալլումը, հյուրեր ու լրագրողներ:

Փաստաթուղթը ստորագրելուց հետո երկու փոխնախարարները պատասխանելով լրագրողների հարցերին, նշեցին, որ երկու ժողովուրդներն ունեն համատեղ մշակութային ծրագրեր իրականացնելու իսկայական ներուժ: Շուտով կստեղծվի մի ֆիլմ, որտեղ կներկայացվի Հայաստանը Սիրիայի կինեմատոգրաֆիստների աչքերով, իսկ Սիրիան՝ հայերի, որը փոխադարձ ճանաչողության համար հրաշալի նախաձեռնություն է: Երկու երկրների միջեւ համագործակցության լայն դաշտ է բացվում սիմֆոնիկ երաժշտության ոլորտում: Սիրիացիները ցանկանում են 2010 թ. «Սպարտակ» բալետը համատեղ բեմադրել, որի պարային խումբը եւ տեխնիկան հայկական կողմը կապահովի, իսկ երաժշտությունը՝ Սիրիայի սիմֆոնիկը, որը ընդամենը 16 տարվա պատմություն ունի: Սիմֆոնիկի գեղեկ Միսաք Պաղպուտյանը նշեց, որ առաջին անգամ են բալետ նվագելու եւ մեծ պատիվ է Հայաստանի սիմֆոնիկի հետ շփվելը: «Նրանցից շատ սովորելու բան ունենք, ու հպարտանում ենք, որ մի օր էլ մենք պատիվ կունենանք Հայաստանում ելույթներ ունենալու»:

Նշենք, որ երկուստեք գտնում էին, որ երկու երկրների մշակութային համագործակցությունը պետք է լինի շարունակական եւ երկարաժամկետ, որովհետեւ մեր երկու ժողովուրդները պատմականորեն ու սերտորեն կապված են միմյանց հետ եւ մեր ապագան կանխորոշված է այդ պատմությամբ:

Սիրիական կողմը իր շնորհակալությունը հայտնեց հայկական կողմին շատ բարձր մակարդակով ընդունելություն ու մշակույթի օրերը կազմակերպելու համար:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԿԺԱՄԱՆԵՆ ԻՏԱԼԱՑԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

# Ի հիշատակ Մինասի, նվեր՝ հասարակությանը

Օգոստոսի 23-ին Հայաստան կժամանեն իտալացի մասնագետներ՝ ավարտին հասցնելու Մինաս Ավետիսյանի «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարի վերականգնողական աշխատանքները, որոնք սկսել են անցած տարի ամռանը, երբ իտալացի երեք մասնագետ Գյումրիի էլեկտրատեխնիկական գործարանի ճաշարանի մասնաճյուղի պատից Ջաջուռի թանգարան տեղափոխեցին նշված որմնանկարը եւ իրականացրեցին վերականգնման առաջին փուլը: Երկրորդը կատարեցին նույն թվականի աշնանը: Այդ խնդիրը լուծվեց Ֆլորենցիայում բնակվող հայտնի քանդակագործ Վիգեն Ավետիսի միջնորդությամբ՝ մշակույթի նախարարությունը դիմեց Հռոմի Պալացցո Սպինելի արվեստի եւ վերականգնողական աշխատանքների ինստիտուտին՝ Հայաստան մասնագետներ ուղարկելու խնդրանքով: Սա նկարչի 80-ամյակին, որ լրացավ անցած տարի հուլիսի 20-ին, մշակույթի նախարարության նախաձեռնած եւ հովանավորած հոբելյանական տարվա միջոցառումներից մեկն էր: Իսկ մեկնարկել էր դեռեւս 2007-ին, երբ նախարարությունն առաջարկեց Հայաստանի կառավարությանը վերջապես անդրադառնալ Շիրակի մարզում գտնվող Մինաս Ավետիսյանի որմնանկարների վիճակին: Առաջարկն ընդունվեց եւ 2007-ին պահուստային ֆոնդից հատկացվեց 5 միլիոն 578.6 հազար դրամ՝ Մինաս Ավետիսյանի «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարի վերականգնման համար:

Արդեն այս տարի Ազգային պատկերասրահում տեղի ունեցավ նկարչի հոբելյանական ցուցահանդեսը, որը հաջողված էր: Հետեւեց հայ մշակույթի զարգացման հիմնադրամի նախագահ Մեցցո Իգիթյանի առաջարկը հոկտեմբերին Մինասի ցուցահանդեսը Մոսկվայում կազմակերպելու մասին: Միեւնույն ժամանակ Մշակույթի նախարարությունը, Վիգեն Ավետիսի միջնորդությամբ, ծանոթություն հաստատեց Նեապոլի գեղեցիկ արվեստների ակադեմիայի դոկտոր, պրոֆեսոր Ֆրանչեսկո Գալլոյի հետ, ով իր հերթին առաջարկեց կազմակերպել Մինաս Ավետիսյանի ցուցահանդեսները Իտալիայում: Բացի այդ, Հայաստանում հունիսի վերջին Մինասի գործերին ծանոթանալուց հետո Գալլոն առաջարկել է մի քանի ծրագրեր, որոնք կիրականացվեն մշակույթի նախարարությունում քննարկվելուց հետո:

Հոբելյանական միջոցառումների շարքը Հայաստանում կեզրափակվի այս տարի նկարչի ծննդյան օրը՝ հուլիսի 20-ին Երեւանի Կամերային երաժշտության տանը կայանալիք համերգով: Համերգին մասնակցելու են հայտնի երաժիշտ Պյեռ Դոմենիկ Պոնելը Գերմանիայից, որի «Մինասին» ստեղծագործությունն առաջին անգամ կներկայացվի հանդիսատեսին Հայաստանի մենակատարների պետական նվագախմբի կատարմամբ: Մինասի հոբելյանական տարին նոր սկիզբ կստանա այս տարվա հոկտեմբերին Ռուսաստանում, իսկ 2010 թվականի գարնանից՝ Իտալիայում:

Ն. Պ.

# Գեղագիտական որոնումներ անցյալի արժեքների մեջ

Երեկ գեղանկարիչ Տիգրան Բարխանաջյանը Նկարիչների միության սրահում բացեց իր առաջին ցուցահանդեսը: Գյումրիի Մերկուրովի անվ. գեղարվեստի դպրոց, Երեւանի Թերլեմեզյանի անվ. գեղ. ուսումնարան, ապա Գեղարվեստի պետական ակադեմիա. այսպիսին է եղել Տիգրանի պրոֆեսիոնալ կրթության ճանապարհը: Ցուցահանդեսի բացմանը նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանի շնորհավորանքից հետո նկարիչ Արկո Բաղդասարյանը Տիգրանի աշխատանքների մեջ ընդգծեց նկարչական բարձր կուլտուրան եւ արտիստիզմը. «Շատ կարեւոր է, երբ արվեստագետը որոնումների մեջ իր ողղությունն է փնտրում»:

Փարավոն Միրզոյանը, որի մոտ ուսանել է Տիգրան Բարխանաջյանը, անդրադարձավ նրա ստեղծագործության ընդհանուր բնույթին, հոգեւոր թեմատիկային՝ Քրիստոսի մատնության, խաչելության պատկերում, որի արձագանքը Տիգրանի կտավներում արտահայտված է գունային մուգ տոնայնություններով, ներքին լարումով, դրամատիզմով եւ մնացած աշխատանքներից էապես տարբերվում է:



Ստեղծագործական որոնումները նրան թեմատիկ բազմազանության են մղել: Գեղագիտական արժեքներ նա գտնում է դասական արվեստի միջավայրում՝ 17-18-րդ դարերի արեւմտաեվրոպական, մասնավորապես հոլանդական նկարչության մեջ:

Ցուցադրված 4-5 տասնյակ յուղաներկ նկարները վերջին 2-3 տարվա աշխատանքներն են, մի մասը նատյուրմորտներ, որոնցում նկարչության վարպետությունը ակնհայտ է, առարկայի, իրի ձեւերի հստակ ու ճշգրիտ զգացողությամբ, գույները՝ անխառն: Լույսի ու ստվերի նուրբ համադրությունները ստեղծում են յուրաքանչյուր թեմային բնորոշ նկարչական մթնոլորտ («Ջութակով նատյուրմորտ», «Նռներով նատյուրմորտ»): Կտավների մեջ գերակշռում են անցյալ դարերի արեւմտաեվրոպական նկարչության մոտիվներով պատկերներ, բազմաֆիգուր կոմպոզիցիաներ՝ կյանքի տարբեր իրավիճակներում («Առավոտյան հարդարանք», «Ջութակի դաս», «Կարուսել», «Մրգեր եւ ծաղիկներ»):

Տիգրան Բարխանաջյանը անցյալի դասական արժեքների մեջ է փորձում ներդաշնակության, գեղեցկության ու մաքրության ձեւեր ու իդեաներ գտնել: Սա ժամանակից խույս տալ չէ, որքան էլ այն արվեստագետի հոգեկերտվածքին խորթ, օտար լինի: Հայացք անցյալին այս վիճակը տարբեր ժամանակներում արվեստի տարբեր ուղղություններ, շարժումներ է ծնել, ինչպես օրինակ 20-րդ դարասկզբի հեթանոսական շարժումը. ամեն դեպքում դրանք նոր շունչ են հաղորդել արվեստին: Այս առիթով գեղագետ Լեւոն Լաճիկյանը այսպես է բնութագրում Տիգրանի աշխարհը. «Նկարներն արված են դասական շնչով: Վարպետությունն ակնհայտ է: Իր բնույթով ներամփոփ, նկարիչը զարմանալիորեն կտավը լցնում է մարդկանցով, սրանով հանդերձ որեւէ աղմուկ չի լսվում, գերիշխողը հարմոնիան է, երաժշտությունը: Ակնհայտ է, որ նկարիչը ներկա իրականությունից ստեղծագործական ազդակներ չի ստանում եւ անհնար է ստանալ, ուստի հայացքը ուղղում է դեպի այն ժամանակները, երբ մարդը ապրում էր գեղեցիկի օրենքներով: Եվ ոչ միայն իր պերսոնաժներին է բնակեցնում, այդ միջավայրում ինքն էլ է բնակվում, նաեւ հաստատում, որ այդ գեղեցկությունը եղել է եւ հետ վերադարձի հույսն է արթնացնում: Հաստատում է այն միտքը, որ, այո՛, գեղեցիկը կփրկի աշխարհը, սակայն, այսօր հենց ինքը փրկվելու կարիք ունի: Այսու՝ նկարիչը գեղեցիկը վերահաստատելու խնդիր է դնում: Նկարների՝ առօրեական թեմաների մեջ անգամ բանաստեղծական-քնարական տրամադրություններն են իշխում»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

AZG NEW 7.QXD 7/3/2009 9:05 PM Page 1





# Ցավալի պարտություն

Եվրոպայի լիգայի խաղարկության որակավորման փուլի առաջին խաղում «Միկան» հյուրընկալվել էր շվեդական «Հելսինգբորգին»: «Միկան» ցավալի պարտություն կրեց 1-3 հաշվով: Մինչեւ 86-րդ րոպեն հաշիվը հավասար էր, սակայն խաղավերջում «Միկան» 2 գոլ բաց թողեց ու ցավալի պարտություն կրեց:

Հաշվետու խաղում «Միկայի» մարզիչները թիմի մեկնարկային կազմում ընդգրկել էին պաշտպանական ոճի խաղացողների՝ ձգտելով ամրապնդել թիկունքը: Վնասվածքի պատճառով բացակայում էր Արամ Ոսկանյանը, ինչն, իհարկե, մեծ կորուստ էր «Միկայի» համար: Փաստորեն, առջեւի գծում գործում էր միայն մեկ «մաքուր» հարձակվող՝ Բոտի Դեմելը:



Առաջին խաղակեսում «Միկային» հաջողվեց անառիկ պահել սեփական դարպասը: Գլխավոր իրադարձությունները ծավալվեցին ընդմիջումից հետո: 50-րդ րոպեին դաշտի տերերի հերթական գրոհը դիպուկ հարվածով եզրափակեց «Հելսինգբորգի» առաջատար, 37-ամյա Հենրիկ Լարսոնը: Ի պատիվ հյուրերի, բաց թողած գոլը չընկճեց նրանց եւ 16 րոպե անց Ուլիսես Մոնտենեգրոն վերականգնեց հավասարակշռությունը: Դրանից հետո «Միկան» հաջողությամբ դիմագրավում էր մրցակցի գրոհներին ու թվում էր, թե խաղը կավարտվի հյուրերի համար ձեռնտու ոչ-ոքի արդյունքով: Սակայն 86-րդ րոպեին կրկին իր վարպետությունը դրսեւորեց Լարսոնը՝ 2-րդ անգամ գրավելով «Միկայի» դարպասը: Ցավոք, դա վերջը չէր: Ավելացված ժամանակի 2-րդ րոպեին նպատակին հասավ Սունդինի հարվածը, ինչը զգալիորեն բարդացրեց պատասխան խաղում «Միկայի» խնդիրը: Ամեն դեպքում, հուլիսի 9-ին Երեւանում կայանալիք խաղում «Միկան» պետք է ձգտի հետ վերադարձնել կորցրածը: Խնդիրն իրոք դժվար է, բայց դեռ հույս կա: Հաջորդ փուլ մտնելու համար «Միկան» պետք է մրցակցին հաղթի առնվազն 2-0 հաշվով:

«Հելսինգբորգի» հետ խաղում «Միկան» հանդես է եկել հետեւյալ կազմով. Արթուր Հարությունյան, Ալեքս, Գեւորգ Պողոսյան, Հրաչյա Միքայելյան (Արա Հակոբյան, 85), Նիկիտա Ֆուրսին, Արմեն Պետրոսյան, Պեդրո Լոպես, Աղվան Մկրտչյան, Ուլիսես Մոնտենեգրո, Էդնեյ, Բոտի Դեմել (Նարեկ Բեգլարյան 88):

Եվրոպայի լիգայի որակավորման առաջին փուլում կայացավ 23 հանդիպում: Նոր մրցաշարի անդրանիկ գոլի հեղինակ դարձավ Վրաստանի «Օլիմպիայի» խաղացող Գեորգի Մեգրելաձեն: Ֆարերների «B-36» թիմի դարպասը նա 2 գոլ խփեց, ինչն էլ ապահովեց թիմի հաղթանակը: Հաջող խաղաց նաեւ Վրաստանի մյուս ներկայացուցիչը՝ «Զեստաֆոնին», որը հյուրընկալվելիս 5-1 հաշվով ջախջախելով Հս. Իռլանդիայի «Լիսբեռնին», ապահովեց հաջորդ փուլի ուղեգիրը: Իսկ ահա ադրբեջանական «Սիմուրգը» սեփական հարկի տակ 0-1 հաշվով զիջեց Իսրայելի «Բնեյ-Եգուդային»:

Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. «Խոնվեդ» (Հունգարիա)-«Իրտիշ» (Ղազախստան)՝ 1-0, «Գրեվենմախեր» (Լյուքսեմբուրգ)-«Վետրա» (Լիտվա)՝ 0-3, «Զիմբրու» (Մոլդովա)-«Օկժետպես» (Ղազախստան)՝ 1-2, «Դինամո» Մինսկ (Բելառուս)-«Ռենովա» (Մակեդոնիա)՝ 2-1, «Տրանս» (Էստոնիա)-«Ռուդար Վելենիե» (Սլովենիա)՝ 0-3, «Սուտյեսկա» (Չեռնոգորիա)-ՄՏԶ-ՌԻՊՕ (Բելառուս)՝ 1-1, «Դինաբուրգ» (Լատվիա)-«Նիմե Կալյու» (Էստոնիա)՝ 2-1, «Լախտի» (Ֆինլանդիա)-«Դինամո» Տիրանա (Ալբանիա)՝ 4-1, «Վալետա» (Մալթա)-«Կեֆլավիկ» (Իսլանդիա)՝ 3-0, «Սպարտակ» Տրնավա (Սլովակիա)-«Ինտեր» (Ադրբեջան)՝ 2-1, «Սլավեն» (Խորվաթիա)-«Բիրկիրկարա» (Մալթա)՝ 1-0, «Անորտոսիս» (Կիպրոս)-«Կերյենգ» (Լյուքսեմբուրգ)՝ 5-0, «Ռանդերս» (Դանիա)-«Լինֆիլդ» (Հս. Իռլանդիա)՝ 4-0, «Ռունավիկ» (Ֆարերներ)-«Ռոսենբորգ» (Նորվեգիա)՝ 0-3, «Սլայգո Ռովերս» (Իռլանդիա)-«Վլազնյա» (Ալբանիա)՝ 1-2, «Բուդուչնոստ» (Չեռնոգորիա)-«Պոլոնիա» (Լեհաստան)՝ 0-2, «Ֆրամ» Իսլանդիա-ՏՆՍ (Ուելս)՝ 2-1, «Մազերվել» (Շոտլանդիա)-«Լանելի» (Ուելս)՝ 0-1:

# Առաջատարը փոխվեց



Շախմատի Կարեն Ասրյանի հուշամրցաշարի 6-րդ տուրն անվանեց նոր առաջատարներին: Հաղթելով Լեւոն Բաբուջյանին, մրցաշարի միակ գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը վաստակեց 5 միավոր եւ շրջանցեց մրցակցին: Նույնքան միավոր ունի նաեւ Հովհաննես Գաբուզյանը, որը պարտության մատնեց Վահե Բաղդասարյանին: 4,5-ական միավորով առաջատարներին հետապնդում են Լեւոն Բաբուջյանը, Հակոբ Վարդանյանը, Նարինե Գասպարյանն ու Էդուարդ Մնացականյանը: Գասպարյանը ոչ-ոքի խաղաց Արման Հայրապետյանի հետ: Վարդանյանը հաղթեց Հովիկ Հայրապետյանին, Մնացականյանը պարտության մատնեց Սուրեն Պողոսյանին: 7-րդ տուրում կենտրոնական կանն առաջատարների՝ Գաբուզյանի եւ Տեր-Սահակյանի մրցավեճն է:

Ջերմուկում ընթացող շախմատի միջազգային պատանեկան մրցաշարում մինչեւ 16 տարեկանների մրցավեճում 6 տուրից հետո լավագույն արդյունքն ունեն Սարգիս Մանուկյանը, Վլադիմիր Կանջարյանն ու Հայկ Թամազյանը: Նրանք վաստակել են 5-ական միավոր: Երեքն էլ հաղթանակներ տոնեցին:

Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում միանձնյա առաջատարը 5 միավոր ունեցող Կարեն Հովհաննիսյանն է: Նա հաղթեց Էրիկ Խաչատրյանին: 6 շախմատիստներ 4,5-ական միավորով հետապնդում են նրան: Մինչեւ 10 տարեկանների մրցաշարի միանձնյա առաջատարի դերը ստանձնեց ռուսաստանցի Նիկոլայ Գոլիկովը, որն ունի 5,5 միավոր: Նա հաղթեց Արման Պետրոսյանին: 5-ական միավոր են վաստակել Միքայել Մկրտչյանն ու ղազախստանցի Զանսայա Աբդումալիկը:

# Մրցանակը կվիճարկեն Ուիլյամս քույրերը

Թենիսի Ուիմբլդոնի կանանց մրցաշարի գլխավոր մրցանակը կվիճարկեն Սերենա եւ Վինուս Ուիլյամս քույրերը: Վինուսը մեծ առավելությամբ հաղթեց Դինարա Սաֆինային (6-1, 6-0), իսկ Սերենան թեեւ դժվարությամբ, սակայն պարտության մատնեց Ելենա Դեմենտեւային (6-7, 7-5, 8-6):

Եզրափակիչից առաջ Վինուսը հայտարարել է, որ իր ողջ ուժերը ներդնելու է քրոջը հաղթելու համար: Սերենան էլ նշել է, որ կփորձի իրեն հատուկ թենիսը ցուցադրել: Սովորաբար նրանց հայրը ներկա չի գտնվում իր դստերի միջեւ հանդիպումներին, սակայն Սերենան հույս ունի, որ այս անգամ նա այդ ավանդույթը կխախտի: Հետաքրքրական է, որ մինչ օրս նրանց միջեւ կայացած հանդիպումների հաշիվը հավասար է: Յուրաքանչյուրը 10-ական հաղթանակ է տոնել:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# «Փորդ Բոյարից» շախմատի մրցաշար

Ինչպես հայտնի է, վերջերս շախմատի Հայաստանի հավաքականը Փարիզում արագ շախմատի մրցաշարում զգալի առավելությամբ հաղթել էր տանտերերին: Այդ մրցամարտի մասնակիցներից երեքը՝ Վլադիմիր Հակոբյանը, Տիգրան Պետրոսյանն ու Գաբրիել Սարգսյանը երեկ հյուրընկալվել էին «Տեսակետ» ակումբում:

Անդրադառնալով մրցախաղին, Տիգրան Պետրոսյանը նշեց, որ նման մրցախաղ անցկացնելու գաղափարը դեռեւս 2 ամիս առաջ էր մտահղացել Վարդան Գաբրիելյանը: Թեեւ մրցախաղի արդյունքը շախմատիստների վարկանիշների վրա չէր ազդելու, սակայն մարզական առումով այն հետաքրքրական էր: Առաջին օրը համառ պայքար ծավալվեց: Մեր շախմատիստների մոտ մի փոքր զգացնել տվեց հոգնածությունը, քանի որ Տիգրանը մասնակցել էր «Փորդ Բոյարի» նկարահանումներին եւ մրցամների ծանոթությունն էր: Նա նշեց, որ նման մրցաշարերի անցկացումը հաճելի է: Արդեն Ֆրանսիայում խոսակցություններ էին տարվում Հայաստան-ԱՄՆ շախմատային մրցամարտ կազմակերպելու շուրջը: Հավանաբար հաջողվի հաջորդ տարի այն կազմակերպել՝ հաշվի առնելով երկու երկրների շախմատիստների խիստ ծանրաբեռնվածությունը:

Ինչ վերաբերում է մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամին, ապա այն մեծ չէր: Տղաների համար տվյալ պարագայում Հայաստանի մարզական պատիվը բարձր պահելն էր: Ինչ վերաբերում է մեր չեմպիոնների առաջիկա ծրագրերին, ապա Գաբրիելը մասնակցելու է Դանիայի մրցաշարին, այնուհետեւ Հայաստանի հավաքականի կազմում հանդես է գալու հոկտեմբերին կայանալիք Եվրոպայի թիմային առաջնությունում: Վլադիմիր Հակոբյանը



մրցաշարի մեկնարկից 2 ժամ առաջ էր ժամանել Փարիզ, իսկ Լեւոն Արոնյանը եկել էր հեռավոր Ավստրալիայից: Ի դեպ, Տիգրանը մասնակցել էր «Փորդ Բոյարի» փորձություններին, որոնցից ամենադժվարը 100 մ բարձրությունից թռնելն էր:

Վլադիմիր Հակոբյանն արժանին մատուցեց մրցաշարի կազմակերպիչներին, նշելով, որ այն ավելի շատ շոու էր: Եվ չնայած դրան, նա գտնում է, որ լավ չէր լինի, եթե մեր թիմը պարտվեր: Ուստի տղաները լարված էին խաղում եւ արժանի հաղթանակ տոնեցին:

Գաբրիել Սարգսյանի կարծիքով մրցախաղի անցկացման հիմնական նպատակը սփյուռքահայության հետ մեր հավաքականի անմասնակցելու է Գերմանիայում կայանալիք Ֆիշերի շախմատի մրցաշարին, այնուհետեւ «Միկայի» կազմում հանդես է գալու եվրոգավաթների խաղարկությունում, ինչպես նաեւ ՀՀ հավաքականում իր խաղընկերների հետ պայքարելու է Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի համար: Տիգրանը բացի եվրոգավաթներից ու հավաքականում ելույթ ունենալուց, նոյեմբերի սկզբին հանդես է գալու շախմատի աշխարհի գավաթի խաղարկությունում:

Ասուլիսի մասնակիցները մեր շախմատիստներին հաջողություն մաղթեցին առաջիկա մրցաշարերում, իսկ «Բարի Սամարացի» ընկերության կողմից նրանց հուշանվերներ հանձնվեցին:

ՀԱՄԱՌՈՏ

## Դավիթ Վիլյան կմնա Իսպանիայում

Իսպանիայի հավաքականի եւ «Վալենսիայի» հարձակվող Դավիթ Վիլյան հայտարարել է, որ Անգլիա չի տեղափոխվի: Նա մտադիր է ելույթները շարունակել Իսպանիայում: Վիլյան, սակայն գաղտնի է պահում, թե որ թիմում է խաղալու: 27-ամյա ֆուտբոլիստով հետաքրքրվում էին չորս թիմեր՝ «Չելսին», «Մանչեսթր Յունայթեդը», «Ռեալն» ու «Բարսելոնը»:

## 10 մլն եվրո Գուիսայի համար

Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» «Ֆեներբահչեին» 10 մլն եվրո եւ թուրք ֆուտբոլիստ Ֆաթիհ Թեքեին է առաջարկել իսպանացի հարձակվող Դանիել Գուիսայի տեղափոխման դիմաց: «Ֆեներբահչեում» գոհ չեն Գուիսայի խաղից, որի համար 2008-ի ամռանը թուրքական ակումբը իսպանական «Մալյորկային» 14 մլն եվրո էր վճարել:

## Տեւեսը կտեղափոխվի «Մանչեսթր Սիթի»

Մոտ օրերս «Մանչեսթր Սիթին» հնգամյա պայմանագիր կկնքի արգենտինացի հարձակվող Կառլոս Տեւեսի հետ: Վերջինիս պայմանագրի ժամկետը «Մանչեսթր Յունայթեդի» հետ արդեն ավարտվել է: Նոր ակումբում Տեւեսը շաբաթական 100 հազար ֆունտ ստեռլինգ կստանա: Վերջինս հենց այդքան էր պահանջում «Մանչեսթր Յունայթեդի» ղեկավարությունից:

## Ռոնալդուն արժեր 80 մլն ֆունտ ստեռլինգ

«Մանչեսթր Յունայթեդն» ու Մադրիդի «Ռեալը» պաշտոնապես հայտարարել են Քրիստիանու Ռոնալդուի տրանսֆերային արժեքի մասին: Արքայական ակումբը պորտուգալացի ֆուտբոլիստին գնել է 80 մլն ֆունտ ստեռլինգով: Ռոնալդուն 6 տարվա պայմանագիր է կնքել «Ռեալի» հետ, որն ուժի մեջ մտավ հուլիսի 1-ից: Իսկ հուլիսի 6-ին նա պաշտոնապես կներկայացվի իր նոր ակումբին:

*էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Հայտարարություն

ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ ս. թ. հուլիսի 10-ից «18+» կանխավճարային սակագնային պլանի բաժանորդների համար wap.odnoklassniki.ru կայքից օգտվելիս, Ինտերնետի սակագինը կկազմի 18 դրամ/ՄԲ:

«Ղ-Տելեկոմ»ՓԲ ընկերություն

ՀՀ, ք. Երեւան, Արգիշտի 4/1

---

ՖԼՈՐԵՍ ԱՃՈՒՐԴԻ ՏՈՒՆ ՍՊԸ-ն Ադամանդ ԵԱՀ բորսայի հարթակում իրականացնելու է ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը`

1.Բնակարան` 33.8 ք.մ: Հասցե` ք. Երեւան, Նուբարաշեն 6-րդ փ., 1-ին նրբ., 1շ., բն. 77:

Մեկնարկային գինը` 7,000,000 դրամ:

Աճուրդի փուլերը` դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով 07.08.2009թ -ից մինչեւ 30.12.2009թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.13.00-ից, ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել` հեռ. 56-52-28 կամ 56-31-15:

---

## ԿՈՐԵԼ Է

**Դավիթ Գեւորգյանի** փաստաթղթերը` սոցիալական քարտ, վարորդական իրավունք, մեքենայի տեխնիկական անձնագիր եւ այլն: Գտնողին խոստանում ենք դրամական պարգեւ: Զանգահարել` 091 47-89-26:

---

www. azg.am

---

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Արարատ քաղաքում Բանկի մասնաշենքի կառուցման մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (0235) 2 14 16 հեռախոսահամարով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Արարատ» մասնաճյուղ ք. Արտաշատ, Շահումյան փ. 31 հասցեով` ժամը 10:00-18:00 (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է հունիսի 29-ից մինչև հուլիսի 8-ը:

---

ACBA-CREDIT AGRICOLE BANK

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունիսի 30-ից «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է գույքի գնահատման մրցույթ: Բոլոր հետաքրքրված կազմակերպություններին խնդրում ենք հայտեր եւ գնային առաջարկներ ներկայացնել մինչեւ սույն թվականի հուլիսի 10-ը «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Կենտրոնական գրասենյակ (հասցե` ք. Երեւան, Բայրոնի 1):

Մանրամասների համար կարող եք զանգահարել` (374 10) 56 58 58, 56 85 85 հեռախոսահամարներով:

---

ՖԼՈՐԵՍ ԱՃՈՒՐԴԻ ՏՈՒՆ ՍՊԸ-ն Ադամանդ ԵԱՀ բորսայի հարթակում իրականացնելու է

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը`

1. Բնակարան 43.30ք.մ.: Հասցե` ք. Երեւան, Շեւչենկո փ., 10շ. բն. 53: Մեկնարկային գինը 11,100,000 դրամ:

2.Բնակելի տուն` 156.5քմ, օժ. շին.` 125.3ք.մ., կաթսայատուն` 7.0քմ, խոզանոց` 3.8քմ, շվաքարան` 56.4քմ, գոմ` 21.0քմ, հողը` 0.343 հա:

Հասցե` Տավուշի մարզ, գ. Բերքաբեր: Մեկն. գինը 2,200,000 դրամ:

3. Բնակելի տուն` 200.3քմ եւ 279.0քմ, հողը` 0.037388 հա: Հասցե` ք. Երեւան, Գ. Մահարու տ. 18: Մեկն. գինը 42,000,000 դրամ:

4. Բնակարան` 87.7ք.մ: Հասցե` ք.Երեւան, Արցախի փ., 20/2շ., բն. 12: Մեկն. գինը 19,300,000 դրամ:

5. Բնակարան: Հասցե` Մայիսի 9 փ., 13շ.: Մեկն. գինը 13, 800,000 դրամ:

6. Բնակելի տուն` 90.2քմ, գոմ` 84.5 քմ, ավտոտնակ` 50.4 քմ, հող` 0.094 հա: Հասցե` Լոռու մարզ, գ. Մեծ Պարնիի: Մեկն. գինը 4,000,000 դրամ:

7. Բնակարան` 76.9քմ: Հասցե` ք. Երեւան, Կուրղինյան փ., 29շ., բն. 15: Մեկն. գինը 14,000,000 դրամ:

8. Բնակելի տուն` 32.4 քմ, սանհանգույց` 7.2 քմ, օժ. շին.` 10.1 գծ. մ, հող` 0.02 հա: Հասցե` ք. Երեւան, Լուկաշինի 84/1:Մեկն. գինը 8,000,000 դրամ:

9. Բնակելի տուն` 73.3քմ., հող` 0.01108 հա եւ 0.00782, ինքնակամ շին.` 1-1-4.9ք.մ. Հասցե` ք. Երեւան, Մարկվարտի 91 տ.:Մեկն.գինը 10,000,000 դրամ:

10. Բնակելի տուն` 102.41 քմ, հողը` 0.06 հա, օժ. շին.` 33.6քմ, գոմ` 53.0քմ, ավտոտնակ` 30.6քմ: Հասցե` գ. Արագած, Գայի փ., 4 տ.:Մեկն.գինը 2,800,000

11. Վարելահող` 0.207 հա: Հասցե` Կոտայքի մարզ, գ. Նոր Գյուղ: Մեկն. գինը 4,100,000 դրամ:

12. Բնակելի տուն` 283.7քմ, հողը` 1.900հա., պարիսպ` 2.2քմ: Հասցե` Արագածոտնի մարզ, գ. Ոսկեվազ: Մեկն. գինը 2,000,000 դրամ:

13. Բնակարան` 41.6քմ: Հասցե` ք. Էջմիածին, Ստանդարյան 28բ շ., բն. 25: Մեկն. գինը 3,500,000 դրամ:

14. Բնակելի տուն` 128.4ք.մ., հող` 0.069հա: Հասցե`Արարատի մարզ, գ. Գեղանիստ:Մեկն.գինը 5,000,000 դրամ:

15. 1)Հող` 0.0068 հա, քարի վերամշակ. արտադ.` 11.7 քմ, ծածկոց` 53.2քմ: Հասցե` Արմավիրի մարզ, գ. Ամբերդ:

2) Հող` 1.0 հա: Հասցե` Արմավիրի մարզ, գ. Ամբերդ: Մեկն. գինը 3,000,000 դրամ:

16. Բնակելի տուն` 158.5 ք.մ., հողամաս` 0.0261հա, պարիսպ` 6.4քմ: Հասցե` ք. Էջմիածին, Պատկանյան 21 տ.: Մեկն.գինը 7,735,000 դրամ:

17. Տուն` 245.8ք.մ., հողը` 0.12հա, մառան` 22.4քմ, թոնրատուն` 13.6քմ: Հասցե` Արարատի շրջ., գ. Քաղցրաշեն: Մեկն. գինը 8,000,000 դրամ:

18. Հող` 011 հա., հիմք` 138.6քմ: Հասցե` Արարատի շրջ., գ. Այգեզարդ: Մեկն. գինը 4,300,000 դրամ

19. Տուն` 286.2ք.մ., հող` 0.1245 հա, թոնրատուն` 12.9քմ: Հասցե` Արարատի շրջ., գ. Նորաշեն: Մեկն. գինը 7,600,000 դրամ:

20. Բնակարան` 29.3ք.մ.: Հասցե` Արարատի մարզ. ք. Արտաշատ, Շահումյան 15-1: Մեկն. գինը 6,500,000 դրամ:

21. Հող` 0.29հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Բերքանուշ: Մեկն. գինը 1,400,000 դրամ:

22. Բնակարան` 38.10 ք.մ.: Հասցե` Արարատի մարզ. ք. Արարատ, Աբովյան 7 - 40: Մեկն. գինը 2,700,000 դրամ:

23. Հող ` 0.21 հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Վ. Արտածատ: Մեկն. գինը 2,600,000 դրամ:

24. Հող` 0.22 հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Ոստան: Մեկն. գինը 840,000 դրամ:

25. Հող` 0.794 հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Տափերական: Մեկն. գինը 2,800,000 դրամ:

26. Հող` 0.12: Հասցե` Արարատի մարզ, գ. Ոստան: Մեկն. գինը 530,000 դրամ:

27. Հող` 0.11 հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Ոստան: Մեկն. գինը 550,000 դրամ:

28. Հող` 0.44 հա: Հասցե` Արարատի մարզ, ք. Արտաշատ, Իսակովի թաղ.: Մեկն. գինը 700,000 դրամ:

29. Տուն` 237.5ք.մ., հողը` 0.12հա: Հասցե` Արագածոտնի մարզ, գ. Արտենի: Մեկն. գինը 2,500,000 դրամ:

30. Բնակարան` 56.0քմ: Հասցե` Արագածոտնի մարզ, գ. Արագած. Գայի 28-13: Մեկն. գինը 1,800,000 դրամ:

31. Բնակելի տուն` 170.8ք.մ:Հասցե` ք. Դիլիջան, Մյասնիկյան 2նրբ. տուն 58: Մեկն. գինը 6,900,000 դրամ:

32. Բնակարան` 138.9ք.մ: Հասցե` ք. Երեւան, Դ. Անհաղթի փ., 4-23: Մեկն. գինը 14,500,000 դրամ:

33. Տուն` 260.8ք.մ., հող` 0.04636 հա: Հասցե` ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն 1, տուն 23: Մեկն. գինը 25,000,000 դրամ:

34. Բնակարան` 71.58քմ: Հասցե` ք. Սիսիան, Որոտան 8-16: Մեկն. գինը 4,150,000 դրամ:

35. Հասարակական սննդի շենք` 169.8ք.մ., հողը` 0.025հա: Հասցե` Սյունիքի մարզ, Սիսիան-Երեւան մայրուղու խաչմերուկի մոտ: Մեկն. գինը 6,500,000 դրամ:

36. Հող` 0.43 հա: Հասցե` Արարատի շրջ., գ, Շահումյան: Մեկն. գինը 1,400,000 դրամ:

37. Հող` 0.292 հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Ազատաշեն: Մեկն. գինը 10,000,000 դրամ:

38. Վարելահող` 2.77հա եւ 2.82 հա: Հասցե` ք. Սիսիան, գ. Լծեն: Մեկն. գինը 2,200,000 դրամ:

39. Տուն` 309.5 քմ, հող` 0.06 հա.: Հասցե` ք. Վայք, Ջերմուկի խճ. 1-ին նրբ. տ. 4: Մեկն. գինը 10,000,000 դրամ:

40. Տուն` 148.9 քմ, հող` 0.1346 հա.: Հասցե` Սյունիքի մարզ, Լեռնաձոր համ., գ. Զագեձոր: Մեկն. գինը 1,700,000 դրամ:

41. Բնակելի տուն` 84.2քմ, կիսանկուղ` 91.8քմ, հող` 0.088հա: Հասցե` ք. Սպիտակ, Շիրակի խճ.: Մեկն. գինը 5,100,000 դրամ:

42. Բնակելի տուն` 134.4 քմ, հող` 0.033 հա: Հասցե` ք. Սիսիան, գ. Գետաթաղ: Մեկն. գինը 2,200,000 դրամ:

43. Բնակելի տուն` 330.0քմ, հող` 0.182 հա: Հասցե`Արարատի մարզ, գ. Գեղանիստ: Մեկն. գինը 20,000,000 դրամ:

44. Բնակելի տուն`127.7քմ, հող` 0.14 հա, կից շին.` 133.4քմ: Հասցե`Արարատի մարզ, գ. Գեղանիստ: Մեկն. գինը 5,000,000 դրամ:

45. Բնակելի տուն`219.0քմ, հող` 0.131 հա: Հասցե`Արարատի մարզ, Վ. Արտաշատ: Մեկն. գինը 11,900,000 դրամ:

46. Առեւտրի սրահ` 147.8քմ, հողը` 0.0262 հա: Մասիսի շրջ., գ. Այնթապ, 4-րդ շարք, 1/11: Մեկն. գինը 16,000,000 դրամ:

47. Տարածք` 37.0քմ: Հասցե` ք. Կապան, Դավիթ-Բեկի թաղ., 8շ: Մեկն. գինը 5,000,000 դրամ:

48. Բնակելի տուն` 45.32քմ, կիսակառույց` 50.14քմ, հող` 0.126հա եւ 0.5225հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Նարեկ: Մեկն. գինը 6,000,000 դրամ:

49. Բնակելի տուն` 128.7քմ, կից շին.` 122.0քմ, հող` 0.119հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Մրգավան: Մեկն. գինը 4,000,000 դրամ:

50. Բնակելի տուն` 64.9քմ, կից շին.` 93.1քմ, հող` 0.1422հա: Հասցե` Արարատի մարզ, գ. Ազատավան: Մեկն. գինը 4,000,000 դրամ:

51. Հողամաս`0.0308 հա: Հասցե` ք. Երեւան, Ռադիշեւիչի 22/6 տուն: Մեկն. գինը 21,000,000 դրամ:

Աճուրդի փուլերը` դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով 06.08.2009թ-ից մինչեւ 30.12.2009թ., յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.13.00-ից,

ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում: Տեղեկությունների համար դիմել` հեռ. 56-52-28 կամ 56-31-15:

---

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այժմ ֆինանսական շուկայում Ձեր իրավունքները պաշտպանված են:
Առաջին անգամ Հայաստանում գործում է ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը, որը կոչված է ԱՐԱԳ, ԱՆՎՃԱՐ եւ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ լուծելու սպառողների եւ ֆինանսական կազմակերպությունների միջեւ ծագած վեճերը:
Ֆինանսական կազմակերպության հանդեպ ծագած Ձեր պահանջի անվճար եւ արագ քննությունը մեր աշխատանքն է:

Հեռ.` 58-23-21, 58-23-22
Էլ. հասցե` www.fsm.am, info@fsm.am

---

United Nations Development Programme

## Մրցույթի հրավեր

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի շրջանակներում հայտարարվում է մրցույթ տեղական հասարակական կազմակերպությունների միջեւ` **«Երիտասարդությունն ընդդեմ թրաֆիքինգի (մարդավաճառ)»** դրամաշնորհային ծրագրի իրականացման համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** ինտերնետային կայքից կամ ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթերը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակից` Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեով:

Հարցերի եւ պարզաբանումների համար զանգահարել Հերմինե Գրիգորյանին` հեռ. +374 10 543418:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը` **հուլիսի 15, ժամը 17:00:**

## Letter of Invitation

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a grant competition for local NGOs for implementation of Youth Against Human Trafficking programme. Detailed package of documents can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UN Security Guards office from UNDP Armenia office at 14 Petros Adamyan str., Yerevan, Armenia.

For additional questions/clarifications please, call Ms. Hermine Grigoryan: tel. +374 10 543418. Deadline for submission of applications is **July 15, 2009, by 17:00pm**.

---

United Nations Development Programme

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԶԾ «Մարդու իրավունքների պաշտպանություն, խթանում եւ կրթություն» ծրագիրը **«Հանդուրժողականության կրթություն»** ծրագրի շրջանակներում հայտարարում է մրցույթ եւ հրավիրում բոլոր հետաքրքրված կազմակերպություններին եւ հաստատություններին ներկայացնել իրենց առաջարկները Հայաստանում հանդուրժողականության խթանման նախաձեռնությանը մասնակցելու համար:

**Հայտեր կարող են ներկայացնել`**

Մարդու իրավունքների եւ հանդուրժողականության ոլորտում աշխատանքի փորձ ունեցող ոչ-պետական եւ շահույթ չհետապնդող կազմակերպությունները*

**Մրցույթի մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել ՄԱԶԾ ինտերնետային կայքի` www.undp.am, «մրցույթներ» (Tenders) բաժինը:**

Մրցույթի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի փաթեթը կարող եք ստանալ նաեւ ՄԱԶԾ գրասենյակում հետեւյալ հասցեյով` Հայաստա, Երեւան 0010, Պետրոս Ադամյան փ. 14:

Տեղեկացնում ենք, որ 2009 թ-ի հուլիսի 7-ին, ժամը 15:00-ին ՄԱԶԾ գրասենյակում դիմող կազմակերպությունների համար կկազմակերպվի տեղեկատվական հանդիպում, որին մասնակցելու համար խնդրում ենք նախապես գրանցվել **srbuhi.harutyunyan@undp.org** էլեկտրոնային հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն ՄԱԶԾ գրասենյակ ոչ ուշ, քան , 2009թ-ի հուլիսի 17-ը, ժ. 18:00, նշված «ՄԱԶԾ, Մարդու իրավունքների կրթություն ծրագիր - Հանդուրժողականության կրթություն», հասցեն` Հայաստան, Երեւան 0010, Պետրոս Ադամյան փ. 14:

## REQUEST FOR PROPOSALS

United Nations Development Programme (UNDP) is announcing a call for proposals on tolerance promotion initiatives through its Protecting Human Rights and Promoting Human Rights and Human Rights Education Project and invites all interested organizations to participate.

Non-governmental and non-profit-making organizations are eligible to participate in this call.

The corresponding package of documents can be obtained from Security Officers at UNDP Office, 14 Petros Adamyan Street, Yerevan, Armenia, or visiting **http://www.undp.am** website Tenders section. Orientation information session will be held at UN House on July 07, 2009 at 15:00. Please register by e-mail at **srbuhi.harutyunyan@undp.org.**

Applications in hard copies must be submitted to the UNDP Office, 14 Petros Adamyan Street no later than July 07, 2009, 18:00 local time.

---

Ես` Կարեկին Կիրկ Օղաբաշյանս, սույնով հրապարակայնորեն հայտարարում եմ, որ ես պաշտոնանկ եմ եղել եւ ազատվել եմ «Դաունթաուն Երեւան» ՓԲԸ տնօրենի պաշտոնակատարի իմ զբաղեցրած պաշտոնից 2009 թվականի մայիսի 1-ից: Հետեւաբար, հիմք ընդունելով իմ պաշտոնանկությունը, ես չեմ կրում որեւէ պարտականություն կամ պատասխանատվություն, որը բխում է կամ կարող է բխել ուղղակի կամ անուղղակի ձեւով «Դաունթաուն Երեւան» ՓԲԸ-ի գործունեության ընթացքում` 2009 թվականի մայիսի 1-ից հետո:

---

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 3.07.2009, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: